



4425

Прыпылак
уважана




В. Г. Гурьев
1913



484
Dy.
A. A. 4.7.189


ԴՊՐՈՑԱԿԱՆ ՏՕՆԵՐԻՆ

ԵՐԳԵՐ ԵՒ ՈՏԱՆԱՒՈՐՆԵՐ



Գին Է 20 կոպ.

Կազմեց Մ. ՏՍԻՍԿԱՆՅԱՆ.



ԱՆԷԲԱՆԴԱՊՈՒ
Երան Յ. Գ. Սահյանցի

8

891.995
Ա-26

891.995
m-26

Апр.
2-2359a

2-2359a

ԴՊՐՈՑԱԿԱՆ

ՏՕՆԵՐԻՆ

(Երգեր և ստանալորներ)

Կ Ա Ձ Մ Ե Ց

Մ. ՏԱՐԱՆԶԵԱՆ.

44904.ա.հ.

Գրան է 20 կոպ.

2132

Հրատարակ. Ե. Սահակյան

1913

29480-67



1. Народный Гимнъ

Боже, Царя Храни!
Сильный, державный,
Царствуй на славу намъ;
Царствуй на страхъ врагамъ
Царь православный.
Боже, Царя храни!

2004

ՎԵՂ. ՀԱՅՐԱՊԵՏԻ ՏՕՆԻՆ

Ե կ ե դ ե ց ու մ

Խոսքը. Օրհնեալ է Աստուած (4 անգամ)
Հայր մեր, որ յերկինս ես...

(Ամէն 5 անգամ)

2. Աստուած հօր հայր գթութեան,
Աղբիւր առատ ողորմութեան,
Պատճառ որդւոյն անեղ ծննդեան
Եւ սուրբ հոգւոյն անհատ բղխման՝
Ընդ որս մի տէր ի մի հրաման,
Հաստիչ բոլոր եղելութեան,
Որով յաւէտ փառաբանի
Երրորդութիւնդ անճառելի:
Որդիդ Աստուած Տէր ե իշխան
Նկարագիր Հօր էութեան,
Որ զպատկեր քս տիրական
Տեսեալ ի վիհն կորստեան.
Զհանդուրժեալ սէրդ անսահման,

Մերժէր զնա ի յաւիտեան,
Ուստի ե մեք փառաւորեմք
Ըզսէր անունդ անճառելի:

Ելեր ի փայտն մահաբեր,
Յոր զփրկական արիւնդ հեղեր,
Որով զմեզ ազատեցեր.
Ի գերողէն ե կեցուցեր,
Ի գերեզման մահու իջեր՝
Եւ զմահացեալսն յարուցեր.
Ընդ որս ե մեք փառաւորեմք
Զանորէնութիւնդ անճառելի:
Հողիդ Աստուած աղբիւր շնորհաց
Առատաբաշխ ե միշտ գթած ե յաւիտեան
Զմայրս մեր պայծառացի,
Զմանկունս Սորին քե զօրացոյ,
Զհայրապետս մեք կեցոյ,
Եւ ի շնորհս քս փայլեցոյ
Ի փառս սուրբ Երրորդութեան
Այժմ ե յաւէտ ե յաւիտեան:

Ի պրոցում.

Դպրոցում:

3. Այլ միածինն ի հօրէ
Եւ լոյս փառաց ընդ նմա,
Զայնք հնչեցին
Մանդարամեօք յանդնդոյ:
Տեսեալ զլոյս մեծ
Հայրապետին Գրիգորի
Պատմէր ցնծութեամբ
Հաւատացեալ արքային:
Եկայք շինեսցուք
Սուրբ զխորանն լուսոյ,
Քանզի ի սմա ծագեաց մեզ լոյս
Ի Հայաստան աշխարհի:

4. Դարեր եկան, դարեր անցան էջմիածին,
Բո հիմն անշարժ ու անսասան էջմիածին,
Զեռ ձեռակերտ դու մարդկեղէն ու առօրեայ,
Դու շողակաթ լուսոյ խորան էջմիածին:
Խաւարի մէջ դու վառեցար, որպէս
կանթեղ,
Վսն պահեցիր մեր սրտերում կայծն երկ-
նային
Անփառունակ սարուկ երկրի դու լուսագեղ
Անշէջ փարոս ազատութեան էջմիածին:

Յրեւոյ հօտի դու ժողովող անփոյթ փարախ,
Հաստատ լինի թող մեր վրայ քո ճովանին:
Դրիգորի սուրբ օրհնութեամբ ծաղկիւր խաղաղ
Փառք ապաւէն մեր աննման, էջմիածին:

5. Տէր, կեցո՛ւ դու գհայս,
Եւ արն գնոտա պայծառ,
Կեցո՛ւ դու գհայս, կեցո՛ւ գհայս:
Զողորմութիւնդ վերին հաճեաց
Զօնել նոցին, զի նովիմք
Մարթացուք ապրել յաստիս:
Ի քո իջեալ տեղի
Զաթոռ Հայրապետի
Մեր հաստատեալ:

Զերկարութիւն կենաց հօր մեր
Աստածազգեաց շնորհեալ Պետին
Մեր հարց, որ զմեզ հովուէ:

ԱՌ ՎԵՂ. ՀԱՅՐԱՊԵՏՆ ԱԶԳԻՍ.

6. Հնչեսցեն լարք զեղգեղ ի սուլ,
Քնարաց հայոց սօփերաց,

Եւ ի մասեաց ձայնք օն անգուր
Երգովք ախորժ մաղթանայ:

Դրատեսցին ի քաղցր ի նւագս

Ազգանւէր գործք սխրալիք,

Հռչակ հարցին յերկրիցն ծագս

Փառաւոր անուն քաղցրիկ:

Երկարեսցին աւուրք կենաց

Տեառն Գէորգայ մեր Պետի

Եւ հիւսեցին թագ պարծանաց

Մեծարդիւն Հայրապետի:

Յն Հայաստան խինդ ի դէմս,

Կայ օրհնաբան ի հանդէս,

Զգեցիր հանդերձ ծիրանիս

Եւ տուր յուզերձ գուեալիս:

Հոգեհատոր իմ օրդիք,

Գտի ահա պաշտպան

Եւ պաշտելի հայրենիք,

Պանծացի ի Տէր Գէորգ:

Դ. ԵՐԳ. ԳԷՈՐԳԵԱՆ ԸՆՄԱՐԱՆԻ

Ո՛հ, զի չքնազ զգացմանց ի վառ

Յուզին այսօր հոգեպարար,

Հրապոյրք ի միտս ի սիրտս կաշտառ,

Եւ յօրդեն իղձք ի հայ օրեար:

Ոչ այս հանդէս վեհ և շքեղ,

Մինչ աստ պաշտին յօրհներդս գեղգեղ,

Նաւակոտիս տանս փառահեղ,

Գուշակէ քաջ յուսոց ի զեղ:

Ոչ այս հանդէս քաղցր աւետեաց

Հնչէ զձայն հայաստանեայց

Հարսին լուսոյ տանս հրճազգեաց

Ի ձայն հրաւէր ի վայր դալարեաց:

Յորում ահա ի թիւս ուխտից,

Հանդիսակցեալ կարօտալից

Նաև ողբք սուրբ հայազնից

Վերասլանան մաղթանք օրտից:

Պահն Աստուած այս նոր տաճար,

Յօգուտ ի փառս հայութեան յար.

Պայծառացն Տէր բարերար,

Արդիւնս ատօք և պերճաբար:

Եւ ընդ սմին ժիշտ յիշեսցի

Ի փառաւոր յիշատակի

Անուն սորին վեհ հիմադրի:

Տէր Տէր Գէորգ Հայրապետի:

8. ՃԵՄԱՐԱՆԻ ՏՕՆԻՆ.

Երբ տեսնում եմ, ինչպէս պայծառ,
եւ անարատ զգացմունքով,
Խմբւում ենք այս տօնի համար
Մենք գիտութեան անունով,
Վերանում են մութ կնճիռներ
Իմ ամպամած ճակատից,
Եւ գէթ առ ժամ վիշտն ու հոգսեր
Հեռանում են իմ սրտից:

Եւ ասում եմ ես հաւատով:

Ահռելի չէ այս զիշեր,

Թէ որ փայլին մի ջերմ լուսով

Առաւօտեան վառ շողեր:

Եւ այս օրն է այդ առաւօտ,

Որ բացւում է մթան մէջ —

Թող այդ լոյսը լինի աղօտ,

Միայն մնայ միշտ անշէջ:

ԹՎՐԳՄԱՆՉԱՅ ՏՕՆԻՆ

9. Նմանեալ Մովսիսի տէր վար-
դապետ

Բերելով զգիր օրինաց

Ի Հայաստան աշխարհ,

Որով լուսաւորեցան ազգ որդւոց Թոր-
գոմայ:

Արդ աղաչեմք զքոյին հեղութիւնդ,
Տէր վարդապետ, բարեխօսեան առ Հայր,
Վասն քո տօնողացս. քանզի քե
լուսաւորեցան մանկունք ս. եկե-
ղեցոյ.

10. Բրբ զարդարեցին անօրինաբար
Զիմաստս անեղին, հաստատուելով յերկրի
Զգիր կենդանի, հովուել զհօտ

Նոր խորայելի. երգով բազմաթիւն

Հնչումբ գլխառուածն օրհնեսցուք:

Որ նորափետուր բանիւ գարգար-
եալ

Պայծառազգեսցան եկեղեցիք հայաստա-
նեայց,

Ի ձեռն Սրբոյն Սահակայ. երգով...

Որ խորհրդեամբ ճշմարիտ լուսոյ

Փառաց անեղին նկարագրեցաւ

Մեզ գիր կենդանի յարգանդ մաքուր

Մեծին Մեսրոպայ, անմատոյց լուսոյն
երկրպագեսցուք:

11. Ս. ՄԵՍՐՈՎԻ ՄԱՇՏՈՅ.

Հայ ժողովուրդ, ես սիրում եմ

Կեանքիդ վիշտն ու խնդութիւն,

Ես սիրում եմ նախնիքներիդ

Աւանդական պատմութիւն:

Տարօնի մէջ համեստ գիւղ կար,

Նրա անունն էր Հացիկ,

Կաթ է բղխում, մեղր է ծորում

Այդ երկրիցը գեղեցիկ:

Այդ գիւղի մէջ ծնունց, սնունց

Մեսրոպ Մաշտոցը արգար,

Ներսէս Մեծին աշակերտեց,

Եղաւ գիտուն ու հանճար:

Մի խուսափիր, անցորդ եղբայր,

Տեսիլք չէ քո առաջը,

Սուրբ Մեսրոպին է լեռան լանջին,

Նա լալիս է իր լացը:

Միայնակ է... Տառապանքի

Դրոշմ է շողում վեհ դէմքին,

Ճակատը լայն, մազերն արձակ,

Լայն վերաբիւ կայ հազին:

Նա կոչուած է քարոզելու

Ժողովրդին անուսում,

Հայոց լեզուով սովորեցնելու

Աւետարանն հայերէն:

Վեհ զգացմունք, անշէջ եռանդ

Բռնկել են նրա մէջ,

Աստուած նրա վառ հոգու մէջ

Սուրբ զգացմունք արծարծեց:

«Փրկարար Տէր, շնորհ տուր ինձ,

— Ասաց Սուրբ մեղմազին.

«Ծնորհք տուր ինձ, որ պահպանեմ
Մեր սուրբ հաւատ, հայ բարբառը
կաթողին»:

Այդ հրահր է, այդ ցնորք է,
Թէ երազ է անխափան,
Սուրբ Մեսրոպի հոգու առաջ,
Պատկեր բացուեց զիւթական:

Նա տեսնում է՝ վառ լոյսի մէջ՝
Աջ ձեռքի թաթ երեւց,
Վէմի վրայ մանրամասն
Հայ տառերը նա գրեց:

Եւ կազմելով «այբբենարան»
Նա սուրբ գիրքն է թարգմանում,
Եւ հայերէն Աւետարան
Ժողովրդին պարգևում:

12. ՄԱՅՐԵՆԻ ԼԵՂՈՒ

Մայրենի լեզու, մայրենի բարբառ,
Ախորժ ընտանի իմ հոգւոյս համար:
Առաջին դու խօսք ականջիս հառած,
Դու սիրոյ քաղցրիկ առաջին յօդած:

Մանկական լեզուի թոթովանք տկար,
Հնչում ես իմ մէջ դու միշտ անդադար:

Գեղեցիկ լեզու, հրաշալի լեզու,
Այդ ինչպէս իմ մէջ հնչում ես յար դու:

Կամիմ աւելի քաջ ծանօթանալ
Դո ճոխ դանձերին, հոգւով հայանալ:

Ասես թէ ահա կանչում էին ինձ
Պապեր ու հայրեր խոր գերեզմանից:

Հնչիր ու հնչիր այժմ և յաւիտեան
Մայրենի լեզու բարբառ սիրական:

13. Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

Ամեն անգամ, երբ թերթում եմ
Ես էջերը Սուրբ Գրքի

Միշտ վշտացած մտածում եմ,
Ո՞ւր է սէրը մարդերի,

Որ փրկիչը սուրբ կտակով
Մարդկութեանը աւանդեց,

Խաչի վրայ իւր արիւնով
Դիր կենդանի զրոշմեց:

Մարդիկ վաղուց մոռացել են

Խաչ ու քարոյ կենդանի,
Աւետարանն ուրացել են
էլ Սուրբ Գիրքը գին չունի,
Ամենայն գիրք միշտ կարգում են
Սիրոյ գիրքը չը կամին,
Ո՛ւր, չգիտեմ, որոնում են
Բախտը իրենց խեղճ կեանքի...

14. Ո՛վ հայոց Աստուած,
Մեր արեամբ ստացւած,
Հաւատն մեր պաշտպանիր,
Եւ թշնամեաց մի մատնել:

Քո հզօր աջդ, մեր ազատ խաչը
Որ մեզ գից խնայեան և մինչ ցարդ
Պահես. Տէր շտապիր մեզ օգնել:
Ո՛վ հայոց Աստուած,

Չեռամբդ կերտուած
Տուն թարգմայ փրկեցիր,
Որպէս աւետիս,
Ողջ երկրադնդի,
Որ տոմին Հայկայ,

Սիրոյդ սուրկայ,
Տէր շտապիր մեզ օգնել:

15. Մ Ե Ր Լ Ե Ջ Ո Ւ Ն

Ախ՛ լեզուն, լեզուն. լեզուն որ չի,
մարդ ինչի՞ նման կրլի: Մէկ ազգի պա-
հողը, իրար հետ միացնողը լեզուն է
ու հաւատը: Լեզուդ փոխիր, հաւատդ
ուրացիր՝ էլ ինչո՞վ կարող ես ասել, թէ
որ ազգիցն ես: Ինչ քաղցր, պատուա-
կան կերակուր էլ տաս երեխին, էլի իր
մօր կաթը նրա համար շաքարից է ա-
նուշ է, մեղրից էլ: Մեր օրօրոցի վրայ
մեր լեզուով մեզ նանիկ ասեցին, էն
զոնէ մեր միտքը չպէտք է ընկնի:

Էն վայրենի ազգերն էլ իրանց
սողա լեզուն աշխարհքի հետ չեն փո-
խիլ: Էնպէս մարդ կայ՝ տասն և հինգ
լեզու գիտի, ամա նա իր լեզուն միշտ
ամենից լաւ գիտի, իր լեզուին է միշտ
խօսում:

Չեզ իմ պատանի հայոց սուրա-

29480-67



հաս երիտասարդներ, տասը լեզու սովորեցէք, ձեր լեզուն, ձեր հաւատը ամուր պահեցէք: Մէկ գատարկ լեզուն լինէ է, որ մարդ չը կարենայ սովորել: Ռուսաց լեզուն մէր տէրութեանն է, պէտք է ամենից անաւել համարենք, յետոյ մեր լեզուն ձեռք բերենք: Բաս չէք ուզիլ, որ դուք էլ զրքեր զրէք, ազգի միջումն անուն թողաք, ձեր անունը յաւիտեանս մնայ անմահ:

16. ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ

Հսկայ կաղնու տակ շարքերով նստած
Մենք մանուկներս դաս էինք սերտում:
Մայրենի լեզուին ջերմ սիրով կատուած,
Կեանքի և լոյսի էինք մենք ձգտում:
Ու խօսեց մեզ հետ լեզուն մայրենի,
Շատ զրոյց, հեքիաթ պատմեց մեր
սրտին,
Երգեց աշխատանք, գութան հայրենի
Գովեց մօր սէրը, արցունքն աղքատի,
Դարձաւ առաջնորդ մանուկ որաների:

Անցան տարիներ.

Մայրենի լեզուի անուշ ել և էջ

Մեր մօր կաթի պէս դարձաւ սիրելի,

Մնում նրանով մտանք կեանքի մէջ,

Ուխտեցինք լինել զինուոր քաջարի:

Այժմ մեր առաջ այլ կաղնի հասակ

Կանգնած է այսօր ճակատին պսակ,

Տեսէք, մանուկներ, ահա նա կարծես

Զեզ ասում լինի.

«Զը մոռնաք, որդիք, լեզուն մայրենի»:

16. ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ

Ով մեծաքանչ դու լեզու,
Ով հեշտ բարբառ մայրական,
Փափկահնչիւն քո բառերուդ
Նման արդեօք այլ տեղ կան.
Դու որ նախ ինձ հնչեցիր,
Նախ սիրոյ սէ, հեշտ խօսքեր,
Այն նախ դքեզ թօթովեւս
Դեռ իմ մաքէն չէ ելեր:
Իմ մայրենի քաղցր լեզու,

Կեանց անստան, կեանց յաւէտ,
Կեանց միշտ լեզուդ հայկարժան
Կեանց ծաղկալից ծաղկաւէտ:
Յաւերժական սուրբ գրոց մէջ,
Կեանց միշտ նորէն ու նորէն.
Կշեալ անուշ քո տողերդ
Թող ամեն սիրտ արծարծեն.
Շնորհ ունիւ Արարչէն,
Կամ պէտք ըլլայ աղօթել,
Շրթունքս սրաւ բորբոքած
Կապաղակէ անարգել:
Իմ մայրենի քաղցր...



17. ՎԱՐԴԱՆԱՆՑ ՏՕՆԻՆ

Նորահրաշ պսակաւոր
Եւ զօրագլուխ առաքինեաց,
Վասնցար զինու. հագւոյն
Արիարար ընդդէմ մահու:
Վարդան, քաջ նահապետ,
Որ վանեցեր զթշնամին,
Վարդագոյն արեամբդ քո
Պսակեցեր զեկեղեցի:
Գոնութեամբ փառատրութիւն
Երրորդութեանդ նուագեմբ,
Բազմութեամբ պսակելոց,
Զմեօք մածեալ առաքինեացս,
Եկեղեցիք հայաստանեայցս
Պայծառապէս պարգարեցան,
Ունելով միշտ բարեխօս
Զճգնութիւն մարտի սոցա:

18. ՀԻՄՆԻ ԷՆ ԼՈՒՆՆԲ

Հիմի ԷՆ ԼՈՒՆՆԲ ԵՂՐԱՐՔ, հիմի ԷՆ
ԵՐՐ մեր թշնամին իր սուրն է գրել,
Իր օրհասական սուրը մեր կրծին,
Ականջ չի գնում մեր լաց ու կոծին,
Ասացէք, եղբարք հայեր, ի՞նչ անենք, հի-
մի ԷՆ ԼՈՒՆՆԲ:

Հիմի ԷՆ ԼՈՒՆՆԲ, երբ մեր թշնամին
Դաւով, հրապուրքով տիրեց մեր երկրին,
Ջնջեց աշխարհից Հայկաջ անունը,
Հիմքից կտրժանեց Թորգոմայ տունը,
Խլեց մեղանից թագ, և՛ խօսք, և՛ զէնք,
հիմի ԷՆ ԼՈՒՆՆԲ:

Թող լուէ մունջը անդամալուծը,
Կամ՝ որոց քաղցր է թշնամու լուծը,
Բայց մենք, որ ունինք հոգի ու սիրտ քաջ,
Ե՛կ անվախ ելնենք թշնամու առաջ,
Գոնէ մեր փառքը մահով յետ խենք,
Ու այնպէս լուենք:

19. Ե Ղ Ի Շ Է

Ոսկեծղի գեղեցկատիպ,
Ո՛վ իմ գրքոյկ ոսկեշուշէ,
Ազգիս փառքը, անբախտ օրը

Դու քարոզող անմոռնչ:
Ո՛վ տար այն անսպառ
Սէրն ու գուժը դէպ՝ Հային
Թէ որ մարդիկ քեզ, ով գրքոյկ,
Երբեմն չի կարգային:
Քեզ կարգալով՝ կմոռանամ
Ես թերութիւնը մեր ազգին,
Դէպ հայ եղբարքս գուժ ու սիրով
Միշտ կլցուի իմ հոգին:
Մտքիս մէջը ես միշտ կտեսնեմ.
«Սերունդ Վարդան մեր Քաջին
Անհնար է՝ անփառունակ
Սարուկ միան կամ կորչին»:
Կամ տեսնելով հէզ հայ տէրաւեր,
Սուրբ Ղեոսիկին կը յիշեմ,
Ու յոճասհատ արտում մտքեր
Ինձմէն հեռու կը քշեմ:

Հայ պատանի, շուտ շուտ կարդա
Այս գրքոյկը ոսկետառ,
Որ համոզուիս թէ՛ մեր հայը
Կորչելու ազգ չէ իսպառ:

20. Ասեց: Ամպերը եկան ծածկեցին
երկինք ու Լուսինն աչքէս խիցին,
Մնացի մենակ՝ հոգիս վրդովուած,
Չեռներս ծոցիս, գլուխս քարշ արած:
Եւ այնուհետեւ ամեն իրիկուն,
Մնում եմ լուսնի խաղաղ ծագելուն.
Նրա տիրամած գէմքը հայելիս,
Յիշում եմ թշուառ վիճակը ազգիս:
Ախ, ցորն, փայլէ տիրադէմ Լուսին,
Գուցէ քու փայլից փայլ տաւ և հային,
Պատմէ շատերուն Վարդանի մանը,
Կամ՝ ինչպէս կորաւ հայ ազգի գահը,
Կամ՝ ինչ վեհ սիրով սիրում էր Վար-
դան՝
Մայրենի հողը — աշխարհ Հայաստան:

21. Բռնէ հայրենեաց պսակադիր
Գողթնի քնարք լոբեր են,
Երկնից թող գան անմահ ոգիք,
Հայոց քաջեր պսակել:
Փախէք ամպեր Շաւարշանէն,
Այ մի ցօղէք ձեր ցօղեր.

Շաւարշանը ոտդուած է
Հայոց քաջաց արիւնէն:
Եւ կը ծլին ու կը ծագկին
Այս գաշտին ոչ խոտ, վարդ,
Այլ Վարդանայ խնկած երկիր,
Պիտի ծագկի սուրբ հաւատ:
Ոգեշունչ մեր քաջ եղիշէն,
Գրիշ ի ձեռին զայ յԱրտազ,
Չափէ, ձեւէ, գրէ, գրոշմէ,
Կամք, մահ, հաւատք Վարդանանց:

22. ՀԱՅԵՐՈՒՍ ԹՈՒԲԸ.

Դուն խելօք, հաշուով վաճառական ես,
Միւլք, փող ու ապրանք: Կասեն շատ
ունիս,
Բայց թէ փողէդ շահ չունի Հայաստան,
Թքել ենք քու ալ, փողիդ ալ վրան:
Քաջ ես, լսել ենք ինքդ մեծաւոր,
Անուն յաղթողի ունիս փառաւոր
Բայց թէ թրէդ շահ չունի Հայաստան,
Թքել ենք քու ալ, թրիդ ալ վրան:
Ի վերուստ քանքար քեզի տուած է,

Հեղինակ անունդ աշխարհ փռուած է.
Բայց թէ գրչէդ շահ չունի Հայաստան,
Թքել ենք քու ալ ..

Բանուկ ու ճարտար դուն ունիս ձեռ-
քեր,

Շատ կ'յօրինես թանկագին բաներ,
Բայց թէ ձեռքէդ շահ չունի Հայաստան,
Թքել ենք...

Երկինք շնորհեցին քեզ լեզու ճար-
տար,

Քարոզչի ստացար հսկակ ու հանճար.
Բայց թէ լեզուէդ շահ չունի Հայաստան,
Թքել ենք...

Մեծ ուսում առիր, եղար գիտնական,
Գովքովդ լցուած է մարդոց բերան,
Թէ ուսումէդ շահ չունի Հայաստան,
Թքել ենք...

23. ԲԼԲՈՒԼՆ ԱԻՍՐԱՅՐԻ,

Ով դու բարեկամ, այրած սրտերու
Խօսնակ գիշերոյ, հոգեակ վարդերու,
Երգէ, բլբուլիկդ, երգէ ի սարէդ,

ԳՔաջն հայոց Վարդան երգէ հոգւոյս
հետ:

Թագէի վանուց ձէնիկդ ինձ դիպաւ,
Սրտիկս որ ի խաչն էր կիպ թունդ
ստաւ:

Ի խաչին թեկն թռայ ու հասայ,
Գտայ զքեզ ի դաշտ քաջին Վար-
դանայ:

Բլբուլ քեզ համար մեր հարքն ասացին,
Թէ չէ հաւ բլբուլ մեր Աւարայրին
Եղիշեայ հոգեակն է քաղցրազրուցիկ
Որ զՎարդանն ի վարդ տեսնու կարմրիկ:

24. Յնձացէք լերինք Արարատայ,
Յնձա Հայաստան երկիրդ Հայկայ,
Յնձա, ջնձա, ջնձա, ջնձա,
Յնձա Հայաստան երկիրդ Հայկայ,
Մեր նախնեաց անմահ անունները,
Պարծանքով յիշեն մեր սերունդները,
Յնձա...

Մեր մեծ սպարապետ քաջն Վարդան,
Կանգնած է սքով իր ազգին պաշտպան,

կեցցէ...

25. ԲՈՅՆ ՔԱՆԴՈՂԻ ՏՈՒՆԸ ԱՍՏՈՒԱԾ
Է ՔԱՆԴՈՒՄ:

Մեծատան շքեղ տանիքի տակին
Ծիծեռնակն իրեն մի բոյն էր հիւսել,
Շատ ու շատ տարի այդ բնի միջին,
Չափեր էր հանել, պահել թռչրել:

Ծիծառն երջանիկ իր ձագերի հետ,
Մեծատան համար աղօթք մըմնջում,
Մեր մեծատունն էլ շատ երջանկաւէտ
Կեանք էր անցնում ու բարիք գիշում:

Չգիտեմ ինչպէս և ինչից զրգուած.
Ծիծեռնակի բոյնը հարուստը քանդեց,
Նրա ձագերին բնից վայր առած,
Ուրի տակն առաւ ու սատկացրեց:

Բնաւեր ծիծառն, երբ որ այս տեսաւ,
Դառն կակիծով մեծատանն ասաւ,
«Այ դու անօրէն, քանդեցիր իմ բոյն,
Թող որ Աստուած էլ քանդի քո շէն
տուն»:

Ասաւ ծիծառը, թուա զէպի ժամ,
Այնտեղից բերեց մի ծեղ այս անգամ,
Չգեց հարստի զոյքերի վրայ,
Այսպէս իր դատը Աստուծոյ յանձնեց նա:

Մեծատան արտերը ժանգահար եղան,
Անասունները ժանտախտից մեռան,
Յարդի ու խոտի զեղերի հետ էլ,
Ճորենն ու զարին կրակին զոհ եղան:

Կրակը լափեց հարստի տունը,
Քորտակեց նրա գոյութեան սիւնը,
Որդիք ու հարսներ և փոքրիկ թոռներ
Տան փլուածքի տակ դի էին դարձել:

Եկաւ նոր զարուն, ծիծառն էլ եկաւ,
Այլ տանիքի տակ նորից բուն դրաւ,
Նորից սկսեց իւր ճուղիւնը,
Խնդումով լցրեց հիւրընկալ տունը:

Իսկ մեծատունը ձեռները ծոցին,
Իւր տուն տեղի փլուածքի միջին՝
Թափառում էր միշտ անդադար կրկն-
նում,
«Բոյն քանդողի տունը Աստուած է քան-
դում»:

26. ԵՐԳ. ՎԱՐԴԱՆԱՅ

Իմ հայրենեաց հոգի վարդան,
 Հոգիս հոգուդ էղնի զուրբան,
 Որ Տղմուտի ամերի քով
 Վաթսուն հազար կտրիճներով,
 Զարկիր, զարկուար, ընկար քաջ-քաջ,
 Պարսիկ սփռուած մի ձախ, մի աջ,
 Իմ հայրենեաց հոգի վարդան,
 Հոգիս հոգուդ էղնի զուրբան:
 Աւետարան ու խաչն առեր,
 Տարեր յերկինք, բարձրացուցեր,
 Եւ դու, ով հայր, թողիր գացիր,
 Անուշ արեգ հոգուն տուիր,
 Ուր հայրենեաց շողայ արեւ
 Իմ հայրենեաց...

Արիւնդ կարմիր, կարմիր թափաւ,
 Դաշտ ու ծաղիկ ներկուեցաւ,
 Լուսնեակն ելաւ ամպի տակից,
 Լալով թափեց արցունքն աչքից.
 Որ հայրենեաց վարդեր բացուին,
 Սոխակն երգէ զբախտի սարին.

Իմ հայրենեաց...

27. Տ Ղ Մ Ո Ի Տ

Մտաւ արեւ. Աւարայրին մութ պատեց,
 Սև ամպերով երկնից դէմքը քողարկուեց
 Բնութիւնը մի քուն մտած հեշտասէր
 Վայելում է անուշութեան վառ ժամեր:
 Բայց այդ քունը մօտ չէ գալիս հեշ-
 տագին

Ծեր Տղմուտի արիւնթաթախ աչքերին.
 Այն սև օրից, երբոր կուրծքը կու-
 սական

Ոռոգուեցաւ արիւնովը հայութեան:
 Անցան դարեր. ծեր Տղմուտը հեծելով
 Գիշերները խանդարում է անվրդով
 Աւարայրի անուշ քունը, և չունի
 Մինչև այսօր նա ողբակից իր վշտի:

Եւ ծերունին հառաչում է սգաւոր
 Արիւն դարձած կոհակները ալեօր
 Գնում գալիս, զարնում են ամերին,
 Անցած փառքը յիշեցնում հայերին:
 «Զեր նախնեացը էլ չէ քնման դուք հայեր,

հայեր.

Չունիք այլևս հայրենասէր այն ոգին
Նորա մեռան և կուրծքերը անվեհեր
Արեամբ բուսած անմահ վարդեր դու-

ղեցին:

Եւ անթառամ զարդարեցան սրահով,
Անմահացաւ այն վեհ հոգին արութեան
Եւ հայրենեաց կեանք տուեցին արիւնով
Անեղ մարտի դաշտում հայ մարդ, հայ
կուսան:

Դուք ի՞նչ արիք, դուք փառաւոր
նախորդաց,

Ստրուկ ծնած, անվառք սնած գաւաղ-
ներ.

Հայ սար, հայ դեռ, հայ դաշտօրայք
շունչ առած,

Պիտ ամօթով այրեն ձեր սև երեսներ»:

Եւ Տղմուտը հառաչում է սգաւոր,
Արիւն դարձած կոհակները ալեւոր
Գնում գալիս, զարնւում են տփերին,
Անցած փառքը յիշեցնում են հայերին:

Ա.ՋՆԻԻ ԸՆԿԵՐ

Ազնիւ ընկեր մեռանում եմ,
Բայց հանգիստ եմ ես հողով,
Իմ թշնամիքս ես օրհնում եմ,
Օրհնում եմ քեզ Աստուծով:
Հեռանում եմ անգին ընկեր

Չ'զնահատած ոչ որից,

Բայց հաւատաւան անձնանուէր

Ազգիս մշակ կը հաշուիս:

Ազնիւ ընկեր չմոռանաս,

Անդաւաճան ջերմ սիրտով

Ես սիրել եմ իմ հայրենիք,

Դնա և դու նայն շաւղով:

Խեղճութիւնը հայոց ազգի

Կարեկցարար մտածիր,

Ոսկէ զբքոյկն եղիշէի

Բաջ առաջնորդ քեզ ընտրիր:

—
29. Ա՛խ, մեր սիրտը լիքը դարդ, ցաւ,
Օր ու արև չտեսանք,
Վա՛խ, մեր կեանքը սևով անցաւ,
Աշխարհից բան չիմացանք:
Հարուստ մարդիկ կուտեն, խմեն

Աշխարհի ճոխ սեղանից.

Մենք աշխարհի խորթ աղերքն ենք,

Մեզ փայլ չը կայ աշխարհից:

Խեղճ աղքատի հողին զուրա դայ,

Քարից հողից հաց քամէ,

Բեռով հացը հարստին տայ,

Հարուստն իշխէ, վայելէ:

Խեղճ աղքատը դառը դատի,

Դատարկ նստի, էյ աշխարհ,

Էլ ինչո՞ւ ես քարը թողնում

Քարի վրայ, քար աշխարհ:

30. Հ Ա Յ Մ Ե Ռ Ն Ի Մ Ք.

Հայ մեռնիմք, ոչ եղբարք, ոչ,

Օտարներէն չկայ յոյս,

Մի աչւրներդ դարձնէք

Յայս յայն կոյս,

Օտարն զձեզ թէի սիրէ իւրարար,

Օտարը, ահ, միշտ է օտար.

Օտարը ձեր վիշտ կը դիտէ անգորով.

Ի՞նչ փոյթ, որ դուք թափէք արցունք ա-

Ով որ հայ չէ, հայուն ցաւերն ան չ'զգար,

Ի՞նչ կը խորունք անգողար:

Մի, դուք ձեր յոյս մի աւանդէք օտարին,

Մի խոր վերքեր ցուցնէք անգութին.

Արքայական կը յաւատք օգնութիւն

Ձեզ կը ծագրէ մերկութիւն:

Հայ ապրինք եղբարք մարդկութեան մէջը,

Հայ կնքեր է մեզ պատմութեան էջը,

Հայ անուամբ զմեզ կողջունէ երկինք,

Եղբարք, հայ ապրինք, եղբարք, հայ մեռնինք,

Հայ ապրինք, մեր հայրն է այն դիւցազուն,

Որ աղատութիւն սորվեցուն մարդուն,

Ու մեզ վնճ անուն մը աւաւ բաժին

Եղբարք, հայ ապրինք, եղբարք, հայ մեռնինք:

31. ԶԵՅԹՈՒՆՅՈՑ ՄԱՐՇ

Քանի՜ թմրենք, բաւ է եղբարք,

Շրջեմ աչերս աջ ու ահեակ,

Շատ ստրուկներ եղան ազատ,

Միայն մենք մնամք հլու հնազանդ:

Զէյթունցիներ, մեր զբօսանք

Է պատերազմ և արշաւանք.

Սուր-թուր գնդակ և հրացան

Մեր խաղաղիքն է յաւիտեան:

կեցցէ Զէյթուն, ապրի Զէյթուն,
Թող չաեսնի սարկութիւն,
Քանի ունի մեզ պէս որդիք՝
Ապրի Զէյթուն, կեցցէ Զէյթուն:

32. Քանիք, որոտան բարձուսա բով-
բիւնք

Արարաւեան դաշտն ի վայր:
Այլ տրանց արիւնք յեռանդն
Առատանան ի հրազայր:
Հրաւէրք հայրենեաց,
Հռչակին ընդհանուր,
Ոգիք հայկազանց բորբոքին ի հուր.
Որք երկնաւորին, սլտակին էք կարօտ,
Որք երկնաւորին փառաց երկնայորդ,
Հաղօն, արի արանց մանկունք,
Հայրենավրէժք հայկազունք,
Հաղօն ի զէն գունդազունդ,
Յեռեալ ի պար թունդ ի թունդ
Ի զէն ի վրէժ, մի ձախ մի յաջ,
Ի զէն ի վրէժ, օն անդր առաջ,
Մի ձախ մի յաջ, օն անդր յառաջ,
Յառաջ, յառաջ, հաղօն յառաջ:

33. Հ Ա Յ Ր Ե Ն Ի Ք

Էյ ջան հայրենիք, ինչքան սիրուն ես,
Սարերդ կորած երկնի մովի մէջ,
Զրերդ անուշ, հովերդ անուշ,
Մենակ բալէքդ արիւն-ծովի մէջ.

Քո հողին մեռնեմ,

Անդին հայրենիք,

Ախ, քիչ է, թէ որ մի կեանքով մեռ-
նեմ.

Երեւի ունենամ հազար ու մի կեանք.
Հազարն էլ սրտանց քեզ մատաղ անեմ:

Ու հազար կեանքով

Քո դարդին մեռնեմ:

Բալէքիդ մատաղ, մատաղ քո սիրուն.

Մենակ մի կեանքը թող ինձի պահեմ
Էն էլ քո փառքի գովքը երգելուն, —

Որ արատաւի պէս

Վեր ու վեր ճախրեմ

Նոր օրուայ ծէգիդ, ազիդ հայրենիք,
Ու անուշ երգեմ, բարձրաձայն գովեմ
Կանանչ արեղ, սիրուն հայրենիք:

34. ՄԵՐ ՀԱՅՐԵՆԻՔ

Մեր հայրենիք թշուառ, անտէր,
Մեր թշնամուց ոտնակոխ,
Իւր որդիքը արդէ կանչում է,
Հանել իւր վրէժ քէն ու ոխ:

Մեր հայրենիք շղթաներով
Այսքան տարի կապկապած,
Իւր քաջ որդոց սուրբ արիւնով
Պիտի լինի ազատուած:

Անա եղբայր քեզ մի դըռն,
Որ իմ ձեռքով դործեցի,
Գիշերները ես քուն չեղայ,
Արտասուքով լուացի:

Նայիր նրան երեք գունով
Նուիրական մեր նշան,
Թող փողփողի թշնամու վէմ,
Թող կործանուի Աստորիան:

Ամենայն տեղ մահը մի է,
Մարդ մի անգամ պիտ մեռնի,
Բայց երանի, որ իւր ազգի
Ազատութեան կը զոհուի:

ՏՕՆ Ա. ԵՒ Բ. ԼՈՒՍԱՒՈՐԶԱՑՆ.

35. Աշակերտք Գրիստոսի եւ առ
Ամենայն տիեզերս առաքեալք,
Բարեխօսեցէք առ Տէր վասն մեր,
Որ առիք զպատուէր քարոզել
Աներկիւղ զբանն կենաց աշխարհի,
Բարեխօս...

Որ արժանի եղէք տեսանել
Զորդին Աստուծոյ յայտնապէս,
Բար...

36. ՇԱՐԱԿԱՆ Ս. ԳՐԻԳՈՐ Լ.-ԶԻ.

Հրաշափառ Աստուած
Եւ միշտ բարեխնամող,
Որ յառաջ գիտութեամբ զփրկութիւն
Հայաստանեայց սկզբնաւորեալ
Ի սարթեական մեղադարաւ սղգէն
Լուսաւորիչ մեղ շնորհեցեր,
Վասն որոյ բարեխօսութեամբ սորա,

Փրկիչ, կեցն գմեզ այժմ և ի քո
Ահաւոր զալստեան:

37. ԼՈՒՍԱՆՈՐՁԻ ԿԱՆԹԵՂԸ.

Կէս գիշերին կանթեզը վառ
Կախ է ընկած երկնքից,
Լուսաւորչի կանթեզն անմար
Հայոց մթնած երկնքից:

Կախ է ընկած առանց սլարան

Արագածի կատարին,

Ու սեղանից հսկայական

Լոյս է տալիս աշխարհին:

Լոյս է տալիս երկար դարեր,

Ու վառւում են միշտ անշէջ

Սուրբի մաքուր արցունքներ

Իւզի տեղակ նրա մէջ:

Ո՛հ մարդկային ձեռ կը հասնի

Էն ահաւոր բարձունքին,

Եւ ոչ քամին կը հանգցնի

Վիշապ-քամին ահագին:

Երբ պատում է մութ խաւարը

Զատախարհիկ մեր երկրին:

Երբ տիրում է ահն ու վախը

Թոյլ, կասկածոտ սրտերին,

Ով անմեղ է լիքը սիրով

Ու հաւատով անսասան,

Ով նայում է վառ յոյսերով

Դէպի հայոց ապագան:

Նա կտեսնի այն մշտավառ,

Ջահը կախում երկնքից,

Ասեա՛ Աստծոյ աչքը պայծառ.

Հսկում է ցած երկնքից:

38. ՄԻ ՀԱՏՈՒՅԱԾ «ՅՈՒԴԱ»-ԻՑ

Երբ չարչարանքի նա դատապարտ-
ում,՝

Դէպ պատժաւալըն էր Յիսուս բարձ-
րանում,

Եւ ծանր խաչը անտրտունջ տանում,

Յուզան, թագկացած տեսաւ տանջանքը

Եւ խղճահարում զգաց յանցանքը՝

Ում անմտութեամբ ինքն այնպէս ատեց,

Ահարգ արծաթով ում կեանքը ծախեց:

Իմացաւ նա, որ էլ չըկայ իրան

Ներման ոչինչ յոյս արդար երկնքից,
Եւ անգոր երկիւղ, երկիւղ ստրկական,
Չարագործութեան մռայլ ուղեկցող,
Մտաւ սրտի մէջ: Գիշեր մինչեւ լոյս
Նրա հիւանդոտ հայեացքի առաջ
Կանգնած էր Յիսուս:

Ահա նա մաշուած, հիւծեալ տառա-
պեալ,

Սուրբ ճշմարտութեան հզօր ջատագով,
Անարատ սիրոյ անսուտ առաքեալ,
Խաչուած վայրենի ամբոխի ձեռով,
Ահա նա, ահա լուռ կշտամբանքով,
Եւ պարզ հնչում է, կարծես բերանից
Խիստ դատաւճիռ ընդդէմ մատնըչին...
«Հեռու, անարատ տեսիլ ահաւոր,
Ո՛հ, հերիք տանջանք, թող գոնէ մի ժամ,
Գոնէ մի վայրկեան՝ կրծքով վիրաւոր
Չապրեմ չը յիշեմ, թող հանգստանամ:
Մի տես, մատնիչդ է աւտօիկ լալիս
Ուներիդ առաջ .. Ո՛հ, Դու ինայիր,
Պատառում է քո հայեացքը հողիս,
Գնա, չքացիր, տեսիլ, մի նայիր...»

Տեսնում ես, ահա արտասուենքներով
Պատրաստ եմ նենդ համբոյր լուանալ.
Տուր հողւոյս հանգչիլ ջերմ աղօթքնե-
րով:

Դու, Աստուած, ներում կարող ես
միշտ տալ...

Իսկ ես. զիտցել եմ ես կարեկցութիւն.
Չկայ ինձ ներում, չը կայ թողութիւն»:

39. ԵՐԳ. ՀԱՅՐԵՆԻ

Մինչդեռ յուսով խայտայ բնութիւն
Յեւ դառնաշունչ ձմերայնոյն,
Եւ ի գաւառն իմ հայրենի
Գեղածիծաղ դառնայ գարուն:

Մինչ բոյր ի բոյր փթթին ծաղ-
կունք

Եւ ճուղեն նորեկ ծիծռունք,
Ի քեզ ես դարձ ատենմ յայնժամ,
Ով ցանկալիդ իմ Հայաստան,
Ո՛չ Հելւետեան ինձ դաշտավայրք,
Եւ կամ գուարթ մարգագետինք
Ոչ քան զքեզ չքնաղագեղ

Իտալական պոյժառ երկինք:

Մինչ բոլր ի բոլր...

40. ԵՐԴ ԱՐՇԱԿԱՅ

Հապաքաջագունք, հայոց գաւաղունք,
Առէք աղեղունք ի մահ երագունք,
Անտառք սպասեն, կենդանիք սարսեն
Զինուցդ ի ձայնէն.
Շեշտակի նետեր թափեցէք քաջեր
Յերես անվեհեր:

Վաղեմք ուր վտանգ յայս մեր զբո-
սանք,
Որսոց արշաւանք մարտից են կրթանք,
Երթամք գունդ ի գունդ յաղեղ և մը-
կունդ,

Յոռտով սրտաթունդ,
Շամփրեմ գկենդանիս
Իբր զթշնամիս
Ի մեր հայրենիս:

41. ԳԻՒԳԻ ԺԱՄԸ

Տանդօ, տանդօ... Նազըւ, վեր կաց,

Արեն արդէն մայր է մտնում,
Տես Սաթունն էլ դործը պրծած՝
Փողոցումն է ժամ շապուում:
Ժամը տուին՝ տանդօ, տանդօ,
Տէր, փառքդ շատ, տանդօ, տանդօ...
Շուտով նախիրն հանդից կը գայ,
Գնանք, որ էլի շուտ յետ դանք,
Կովը կթենք թըւ-թըւ կաթ տայ,
Կովը կթենք, մեր ցաւն հոգանք:
Ախ, Նազըւ ջան, չես իմանում՝
Էգուց էլի աղան կը գայ:
Նրա փորը միշտ անկշտում,
Էլի ամպի պէս պիտ գոռայ,
«Շուտով, Գրիգոր, փողերը բեր,
Էլի չըգայ կովդ հանի»:
Ախ, Նազըւ ջան, այն ինչ բան էր,
Միտդ է հերու... Տէր, դու փրկի...
Հայրիկդ արդէն գնացել է,
Որ փող ճարի, էրբ պիտի գայ,
Տեսնենք մէկը խզացել է...
Ախ, սե օրը Տէրն էլ չտայ:
Բարի մարդիկ միշտ կ'լինին,

Հայրիկդ հետք փող կրերի,
 Փողը կը տանք չար աղային,
 Որ մեր հորթուկն էլ չիլի...
 Տան-դօ, տան-դօ... նաղլու, զնանք,
 Արևն արդէն մայր է մանում,
 Էգուց տեսնենք, որ վեր կենանք,
 Ինչ նոր արև է մեզ ծագում...
 Ժամը առին...

42. Զարթիր սիրտ իմ վշտահար,
 Նոր առաւօտ քեզ ծագեաց,
 Պարք մուգայից շուրջ դրե,
 Պահեն զգահոյսդ յարհաւարց:
 Պանծան, զիւցազուն մեծ արքայ
 փառօք,

Ճեմա տուեալ յերգս քո երգով,
 Ո՛չ արև, ո՛չ լուսին, ո՛չ տասեղք, ո՛չ
 երկին,
 Հասանեն քոյդ փառաց յաւերժացին:
 Ուրախութեան օր է այս,
 Բերկրին սրտեր դեռահաս,
 Պարք մուգայից...

43. ՍԱՍՆՈՅ ԴԱՇՏՐ

Թո՛ղ բլբուլ չերգէ՛ Մշոյ դաշտերում,
 Թո՛ղ երգ չ'հնչէ՛ Սասնոյ լեռներում,
 Թո՛ղ ժպիտ չ'գայ հայերուս դէմքին,
 Թո՛ղ թախիժ տիրէ հայերուս սրտին:
 Էլ ինչո՞ւ ծաղկի քաղցրահոտ շուշան,
 Հայոց Եգէմի դաշտում աննման,
 Քանի հայ աղջիկ չէ զարգարելու
 Ծաղկով իւր կուրծքը շքեղ պճնելու:
 Հայի ձեռները արիւնով ներկուած,
 Հայոց սրտերը վշտոյ է պատած,
 Թո՛ղ բլբուլ չերգէ Մշոյ դաշտերում,
 Թո՛ղ երգ չը հնչէ Սասնոյ լեռներում:

44. ԱՐԻՔ ՀԱՅԿԱԶՈՒՆՔ

Արիք հայկազունք, առաջ ընթանանք
 Սասմանազրութեան նոր բարեմ ալ
 տանք.

Որ ազգն երբ դանի փրկարար կոչեց,
 Նոր հոգի նոր կեանք անոր պարգևեց:

եկայք բարեկամք, առ բարձրեան
Աստուած

Ուղղենք մեր մաղթանք,
Սուրբ սրտից բղխած,
Կեցցէ, կեցցէ, կեցցէ միշտ
Ազգն ու Մահմանապրօժիւն:



ԴՊՐՈՑԱԿԱՆ ՏՕՆԱԾՍՈՒՆ

45. Տ Օ Ն Ա Ն Ս Ռ

Ինչ սիրուն է տօնածառը,
Չորս կողմից լուսաւորուած,
Ինչ գալար է, ինչ խուճուճ է,
Մինչի ծայրը զարդարուած:
Եւ ինչ ուրախ երերում էն,
Նրա զարդերը սփեղէն,
Ոտիկները ծանրացնում էն,
Խաղալիք ու քաղցրեղէն:

Դէ՛, ընկերներ մեր փարելի,
Էլ ինչ իզուր սպասենք,
Երգենք երգեր մեր սիրելի
Եւ ապա ուրախ պարենք:

46. Երկու փոքրիկ նապաստակ,
Հանգիստ խոտ են կրծոտում,
Եւ գալիս է չար ուրսորդ,

Փըշտ, բոլորն են փախչում:

—

47. Ահա եկաւ նոր տարի,
Հետը բերաւ նոր բարի
Մանր աղայ ուրախ օր,
Բարի զաւակ հօրն ու մօր:

Մանր աղայք են ուրախ,

Ունին կաղին, կողինախ,

Սալորի չիր, չամիչ, թուզ,

Փշտա, ունտալ և բնկոյզ:

Մանր աղայք չմոռնաք,

Աշխարհումս չէք մենակ,

Ուրիշ շատ խեղճ աղայք կան,

Աղքատ ու անօգնական:

Նորա հայր ու մայր չունին,

Սե չոր հացի կարօտ են.

«Աղքատներին ողորմած

եղէք» կասէ ձեզ Աստուած:

48. Մ Ա Ն Ո Ւ Կ

Դու մանուկ չքնաղ, եղէմ ծաղկալից,

Ո՛րքան քնքուշ ես, իբրան սիրասուն,
Նայում եմ վերադ և հողիս նորից
Զգում է նոր կեանք, նոր երջանկու-
թիւն:

Ախ, ինչպէս սիրով այդ փոքրիկ
գլխիդ

Ձեռքերս դրած, ես ջերմ, սրտեւանդ

Աղօթք կանէի, որ Տէրը քեզ միշտ

Պահպանէր այդպէս մաքուր, անարատ:

49. ՆՈՐ ՏՈՐԻ

Արի դու արի,

Քո զաւգ բարի,

Սիրուն նոր տարի,

Նոր օրեր բեր մեզ:

Ձիւն տուր սարերին,

Անձրե՛ արտերին,

Կարկուտը՝ ծովին,

Զով արեր՝ մեզ:

Անթուփ ծաղիկից,

Աններկ կարմրուկից

Բարի ցաւերից

Ազատ պահիր մեզ:

Մայրական գլխով

Գրկաբաց ձեռքով,

Ուրախ ժպիտով

Անքազ զերկը մեզ:

50. ԿԱՐԴԱՆ ԳՐԵԼ

Երբոր լեզուս բացուեցաւ,

Ազատ խօսիլ սովորեցայ,

Բարի մօրս ձեռքի տակ

Գրեւ կարգաւ սկսայ:

Շատ ժամանակ չանցկացած,

Այլեւ զիր կարգաւ

Այնպէս գծուար չէր թւում,

Ինչպէս կասեն ծոյլերը:

Այնուհետեւ ինձ համար,

Հոլ, վեգի, զնգակի չափ

Սիրելի են թուզիթ, գրէն,

Գիրք, քանոն, մատիտ, տետրակ:

—

51. Елочка, елочка.

Какъ ты мила,

Ты намъ для праздника

Счастье дала.

Ты не сердись,

Что тебя разлучили,

Съ братьями съ сестрами,

Гдѣ ты росла.

Будемъ любить

Какъ сестрицу родную,

Будемъ съ пѣсней

Ласкать дорожную.

Сколько радостей

Ты намъ посылаешь.

Сколько бѣдныхъ дѣтей

Ты утѣшаешь.

Вотъ тебѣ дѣтскій

Нашъ низкій поклонъ

Вѣрь, что признательно

Ласково онъ.

Будемъ, елочка,

Мы веселиться

Вокругъ тебя играть
И рѣзвиться.

52. Պ Ա Ր - Ե Ր Գ

Այսօր մենք շատ ուրախ ենք,
Արիք ընկերք մենք կարգով
Շրջանաձև սլար բռնենք,
Պար-երգ երգեր մենք երգենք:
Հա հա հա, հա հա հա
Այսօր մենք շատ ուրախ ենք:
Կրօնի գառը պատմում ենք,
Հայ-լեզուն վարժ կարգում ենք,
Եւ զբաւոր վարժութիւններ
Առանց սխալի գրում ենք: Հա հա...
Փոքր թւեր բերանացի,
Դասատան մէջ հաշւում ենք,
Իսկ մեծերը գրաւոր
Մեր աներում վճռում ենք:
Նկարչութիւն սիրում ենք,
Տեսրերը մաքուր պահում ենք,
Եւ ուսուցչի տուած գառը
Մեծ ջանքով նկարում ենք:

Երգերը մեծ եռանդով
Խմբովին ուսանում ենք,
Եւ մեծ դասամիջոցին
Մենք ներգաշնակ երգում ենք:

53. Վ Ե Ր Կ Ա Ց

Վեր կայ մանուկ խորունկ քնից,
Արեն արդէն ծագել է.
Վեր կայ փափուկ քո անկողնից,
Հաւը վաղուց խօսել է:
Դէ, շուտ վեր կայ, էլ մի քնիր
Ծոյլ ու անհագ մակողմում,
Առ գրքերդ առաջ դիմիր,
Որ բազմ գտնես զու կեանքում:

55. Ծ Ո Յ Լ Ա Ղ Զ Ի Կ

Բանն ի՞նչ կանեմ, կեդտոտ է,
Բամբակը՝ կորիզոտ է.
Մեռաքս պիտի, որ մանեմ,
Մաստատ պըտի, որ ծամեմ,
Կարանը տիտիկ անեմ,

Անցնողին մտիկ անեմ.

Ուտեմ, խմեմ,

Մթնի, քնեմ:

55. ԾԻՏԸ ԵՒ ԲԱԶԵՆ

Ծիար ծառին ծլվում է

Ծիւ, ծիւ, ծիւ,

Բազէն գլխին պտտւում է,

Վնւյ, վնւյ, վնւյ,

Ծիար լսեց, ծիար վախեց,

Վնյ, վնյ, վնյ,

Բազէ թը՛ռռ, բազէ թը՛ռռ,

Հնյ, հնյ, հնյ,

Բազէն թռաւ, բազէն փախաւ,

Ինչ լաւ եղաւ, հէյ, հէյ, հէյ.

Ծիտիկ-միտիկ, պիծիկ-միծիկ,

Պտպտուրիկ, չլպտուրիկ

Դու լաւ պրծար չար լազէի

Սուր ճանկերից հնյ, հնյ, հնյ:

56. Ա. Ք Ա. Ղ Ա. Ղ.

Դու ինձ ասա, աքաղաղ,

Ոսկէ կատարիկ մատաղ,

Կարմիր մօրուքիկ մատաղ,

Ինչի՞ ևս շուտ արթնանում,

Բարձր բարձր երգ ասում:

Քաղցր քունս խանգարում:

57. Պ Ա. Բ - Ե Բ Գ

— Աղջկերք, պար բռնեցէք.

Արմիկի երես գովեցէք,

Այ երես, շարմաղ երես,

Քո շափաղով մեր սիրտ կերես:

— Այ աղերք, պար բռնեցէք.

Արմիկի աչեր գովեցէք,

Այ աչեր, սիրուն աչեր,

Արևի պէս փայլուն աչեր:

— Աղջկերք պար բռնեցէք,

Արմիկի կոներ գովեցէք,

Այ կոներ, ուժեղ կոներ,

Դուք կը շարժէք մեծ մեծ լեռներ:

— Այ տղերք, պար բռնեցէք,
Արմիկի հասակ գալեցէք,
Այ հասակ, բարձր հասակ,
Քեզ վայել է կադնի պսակ:



ՄԱՅԻՍԵԱՆ ԶԲՕՍԱՆՔԻՆ

58. Գ. Ս. Ր. Ն. Ա. Ն. Ը.

Ահա եկաւ մեր գարուն
Ու զարգարեց զաշաերուն.
Գոյնգոյն ծաղիկ մեզ բերեց
Սիրուն գարուն, մեր գարուն:

Գոյն գոյն ծաղիկներ,

Գնանք քաղելու,

Տէրին փառք տալու:

Զմրան չորցած դեղինք

Տեսէք, ինչո՞վ է ծածկուած,

Կարմիր դեղին շուշանք

Զորս բոլորն են տարածուած: Գոյն:

Մի քայլ յառաջ մենք իսկոյն

Տեսնում ենք վարդ գոյնդգոյն.

Վարդի միջին սոխակներ

Երգում են միշտ անհամբեր:

Գոյն գոյն ծաղիկներ
Գնանք քաղելու,
Տէրին փառք տալու:

59. Մ Ա Յ Ի Ս Ի Ն.

Մայիս նոր օր բերում
Եւ մեր հողին վառւում,
Թող տունդ, գուրս վաղիր,
Ճակարից պսակ հիւսիր:

Շէկ արեւ է փայլում.
Կանանչը գետին ծածկում,
Թռչնոց երգ, սրնդի ձայն
Հեռուից է լսում:

Էրբ մայիսին ես անցնում եմ անտառով,
Գեղեցկապոյն թռչուններ շատ եմ
տեսնում.

Ամեն մէկը ուրախութեամբ երգելով
Աշխատում է տաք բուն շինել թփերում:
Լա լա լա, լա լա լա, լա լա լա...

Երբ անցնում եմ ես ծաղկապատ
դաշտերով,
Շատ թիթեռներ ու բզեզներ եմ տես-
նում.

Սե ու սպիտակ հագար ու մի գոյներով
Ծաղիկից ծաղիկ թռչկոտում են ու բըղ-
ղում: Լա լա:

Ա՛խ, շատ սիրուն, շատ գեղեցիկ է
դաշտը,

Որի վրայ ոչխար, տաւար և այծեր
Ամեն կողմից բառաչում են ու մայում,
Եւ ինձ իրանց քաղցր ձայնով գրա-
ւում:

61. Ե Ր Ա Փ Ի Շ Տ Ն Ե Ր.

Մենք երաժիշտներ ենք, շատ
նուագարաններ լաւ ածում ենք,
Ունինք ջութակ, տաւիղ, սրինգ.
Դաշնամուր, ծնծկայք և թմբուկ,

Զորօրինակ, գորօրինակ

Այ ձեզ ջութակ.

Պիլիլի լիլի, պիլիլի լիլի,

Այսպէս մենք ածում ենք.

Պիլիլիլի պիլի լիլի

Այ, ոյ, այ այսպէս մենք ածում
ենք:

62. Թռչնիկն ահա գէտ ինձ գալով,
Ոտքիս վերայ նստում է:
Կացում բռնած մի նամակիկ,
Մօրիցս ողջոյն բերում է:

Սիրուն թռչնակ, դարձիր գնահ,
Բարեկտ հետ տար մի սլաշ,
Ես չեմ կարող քեզ ընկերել,
Դեռ գտնո չեմ վերջացրել:

63. Շմբողջ շաբաթ է, որ
Մենք փակուած ենք դպրոցում.
Գիշեր և ցերեկը անխոնջ պարագում.
Տրամտամ տիմ տամ
Տարաւամ, տարաւամ, տամ տիմ
տամ:
Երկինքն է կապուտակ,
Արեգակը խիտ սլաշատ,
Օդը մեզմ գովաշունչ
Դաշտերը գալար: Տրամ. .

64. Մեր ձագուկը փոսում նստած
քնում է,

— Այ խեղճ ձագուկ հիւանդ ես դու,
Որ չես ուզում կուտ ուտել:
Ձագն ուտում է, ձագն ուտում է,
ձագն ուտում:

Ձագիկ դու մեր չար կատուից զգուշացիր,
Նա ունի սուր-սուր ճանկեր,
Կարող է քեզ փռատել.
Ձագիկ թռաւ, ձագիկ թռաւ, ձագիկ
թռաւ:

64. Մ Ա Յ Ի Ս Ի Ն

Մենք արժանացանք ուրախ մայրիսին,
Ծառեր, ծաղիկներ, ողջ կանաչեցին.
Կապոյտ երկնքում փոքրիկ ամպերը
Ուրախ ու զուարթ յառաջ վազեցին:
Տերեւաշատ ծառի ստուերների տակ
Թռչուններն իրանց երգերն են երգում,
Կանանչ գաշտերի փափուկ մարդերում
Պէս պէս կենդանիք ուրախ արածում:

65. Գ Ա Ր Ռ Ի Ն

Գալիս է զարուն. նոր կեանք է բերում,

Վարդն ու շուշանը բացւում են, բու-
րում,

Թարմ և ծաղկազարդ փայլում է տերև,
Մանուկ գործածեամբ ծաղում է արև:
Ծեչում է անտառ: Երգում է ծիծառ:
Վաղորդեան ցօղը սփռում է զոհար՝
Կանանչ հովիտը փռուում է պայծառ:

Զարթեց բնութիւն կուսական խան-
գով,

Դէպ գործ մեղուններ գիմեն եռանդով,
Վաղ առաւօտեան ձայնը կոչնակի,
Կանչում է գէպ դաշտ չարքաշ մշակին:

66 Ծ Ի Տ Ի Կ

— Պատիճ-մոտիկ, այ ծիտիկ,

Քանի է ոչես ծառից ծառ:

Գոն, մի տեղ քիչ ախախի,

Քողնած թևիդ հանգիստ առ:

Ճիկ, ճիկ, ճիկ, ճիւ ճիւ, ճիւ,

— Ես յողնելու սովոր չեմ,

Կուգեմ լինել մեծ արծիւ,

Որ տւելի լաւ թռչեմ:

67. Մ Ե Ղ Ո Ի

Հա՛ ծագեցաւ արեգակը,

Հա՛ ծագեցաւ մանուշակը,

Մեղուն թողեց իւր փեթակը

Տղազալով, տղազալով:

Մեղուն թռաւ ծաղիկից ծաղիկ,

Մեղը առաւ քաղցը անուշիկ,

Մոմը տարաւ հոտոտ լուսիկ

Պզպզալով, պզպզալով:

Անուշ մեղր մանր տղոց,

Դեղին մոմը ամեն սրբոց,

Իսկ չարերին՝ կըճ ու խայթոց,

Կակծալով, կակծալով:

68. ԱՌԱՒՈՏԵԱՆ ՈՂՋՈՅՆ

Թարմ և զուարթ արթնանալով

Ես պարտէզիկ վազեցի,

Գիշերը անուշ քնելով

Ես յետ մնալ չուզեցի:

Ահա շրջան եմ ես մտնում,

Եւ աջ ու ձախ ձեռ մեկնում,

— Ողջոյն ձեզ, բնկերներ,

Դէ՛ նորոգենք մեր խաղեր:

69. Փ Ի Ո Ո

Կառուն եկաւ, փխիկ, փխիկ,
Հազար նազով, ինչպէս հարսիկ,
Դունչը սրբեց թաթիկներով,
Մազը սանրեց չանչիկներով:
— Կառու, կառու, էր ես տրտում
Թէ մկներն են այսօր արթուն:

70. Զ Ա Տ Ի Կ

Հողմը հնչեց ի հարաւէն,
Աղատուեցան դաշտ ձիւներէն.
Բերկրութիւն է ամեն տղոց,
«Քրիստոս յարեաւ ի մեռելոց»:
Առունները խոխոջացին,
Ծառերն բողբոջ արձակեցին
Օդը լի է ձայնիւ թռչնոց, «Քրիստոս ..
Տղայ աղջիկ ուրախ, զուարթ,
Փթթած են գերթ մայիսի վարդ,
Որա քէն չունի սիրտը մարդոց,
«Քրիստոս յարեաւ ի մեռելոց»:

ԽԱՌՆ ԵՐԳԵՐ ԵՒ ՈՏԱՆԱԽՈՐՆԵՐ.

71. ՀԱՍՈՅԻ ԵՐԳԸ.

Ահա ծագեց կարմիր արև,
Տաք է պայծառ է օրը,
Դէ՛հ քաշեցէ՛ք, սիրուն եզներ,
Յառաջ տարէք արօրը:
Վարը վարենք, ահօս փորենք,
Ոտը ահոսներ հողի մէջ.
Սերմը ցանենք, որ հունձ հնձներ,
Յորեն զիգենք կոյի մէջ:
Կրկայ ձմեռ, մենք վախ չունինք,
Ուրախ կանցնի մեր օրը,
Ուտելու միշտ սաշար ունինք,
Երբ լիք լինի մեր հորը:
Դէ՛հ, քաշեցէ՛ք, սիրուն եզներ,
Շուտով վարենք արտերը,
Թող չստեն մեր դրացիքը,
Ծոյլ են Հասոյի եզներ:

72. ԱՅ ՍԵՒ ԱՄՊԵՐ

Այ սե ամպեր, վա՛յ սե ամպեր,
Սիրոսս պատեց սե ու մութ.
Արդեօք ի՞նչ էք դուք ինձ բերում,
Գարնան անձրև՞ թէ՛ կարկուտ:

Յուսով-լուսով արա եմ ցտնել,
Արիւն թափել ու քրահնք,
Ողջ սուրբերին մոմ եմ վառել.
Աղօթք արել... որ երկինք
Արտիս նայի, տանս խնայի,
Կեանք տայ, օք տայ իմ հացին,
Վա՛յ բալէքս Աստուած չանի,
Թէ՛ որ անհայ մնացին...

Այ սե ամպեր, ի՞նչ էք դուում,
Սիրոսս...

73. ԳԵՂՋՈՒԿԻ ՏԱՂԸ

Աղօթարանը բացուեցաւ
Ժամանակ է զարթելու,
Երթամ ախոռ գոմշուկներս
Լծեմ գութան վարելու:
Դէ՛, գոմշուկներ, ելէ՛ք, ելէ՛ք,
Արար երթանք աշխատենք,

Հարկ ու խարճի վատէն մօտ է,
Վոթենք արիւն ու քրահնք:
Հայի դութան, հայի դութան,
Որի՞ համար կը ջանաս,
Ով քեզիմով կը տանջուի՝
Որին դու կուշա հաց կատս:

74. ՇԻՆԱԿԱՆԻ ԵՐԳ

Այ մարդ այսօր շատ քնեցար ննջեցիր,
Առաւօտեան հով ժամանակն անցուցիր,
Արեգակը ծովի ծայրէն ծագեցաւ,
Ջերմութիւնը դաշան ու ձորը փռուե-
ցաւ,
Ընկերներդ վաղ արտերը գնացին,
Յորեն զարի գերանդիով հնձեցին,
Խուրձ՝ կապեցին, բարդ բարդեցին
դաշտումը.

Նստան հանգչել կաղնիների հովումը:

Այ մարդ, վեր կաց սառը ջրով լը-
ուացւիր,
Գօտիդ կապէ, գերանդիդ ու դաշտ
հասիր,

Քանի հով է հունձդ արա արտումդ,
Հունձդ հնձէ՛, մի ծուլանար գործումդ:

75. Հ Ա Տ Ի Կ

Լոյսը բացւում է, շուտ արար գնամ,
Պատում սուր խոփով ես կուրծքը հողի,
Ի՛մ սիրուն հատիկ, քեզ նրան պահ
տամ,

Մինչև օրերը ամբան արևի:

Թողեմ քեզ, հատիկ, և զարդս քեզ
հեռ,

Թէ Աստուած ուզեց, դու կանաչեցիր,
Թող զարդս մեռնի գեանի տակ անհետ,
Դու ինձ մխիթար կրկին տուն գարձիր:

Եւ ջերմ աղօթքով Տիրամօր տաջի,
Ես մոմ կը վառեմ, ես խունկ կը ծխեմ,
Որ քեզ պարգևէ մի առատ անձրև,
Որ քեզ միշտ սիրով հայէ ինդպագէ:

Բայց թէ այդ շնորհին մեղքերիս
համար

Արժանի չլինիմ, ծով կղարձնեմ
եւ տաք քրախնքը ճակտիս արևատ,

Որ քեզ, իմ հատիկ, ծառաւ չթողնեմ:
Ծլիր, կանաչիր, ոսկէ սաւանով
Ծածկիր իմ արար ողջ ալեծածան,
Նոր այն ժամանակ անուշ շշիւնով,
Տուր ջարդուած սրտիս մի քուն հան-
գըստեան:

76. ԵՐԿՐԱՅՈՐԾ

Ո՛հ երկրագործ, երկրագործ,

Քանի սիրուն է քո գործ:

Արևն չելած, մաճն է քո ձեռիդ,

Եթ զոյգ գոմեշներ լծած գութանիդ,

Ծրում ես, պատռում դու կոշտ ու խո-
պան

Լեռներ ու ձորեր, հանդ ու անդադտան:
Ցանում ես ցորեն, կորեկ ու զարի,
Բամբակ ու բրինձ ամենայն տարի,
Ծլում են ծաղկում ճակտիդ քրախնքով
Քո վարած դաշտեր, որ լի էր փշով:
Անցնում է դարուն, ոսկեգոծ հասկեր
Լցւում ծածկում են քո սիրուն արտեր,
Քամին փշում է արար տառանում,

Կարծես քեզնից հեռու է տանում:
 Հասնում է ամառ մանգաղը՝ ձեռիդ,
 Հնձում ես, հնձում, խուրձեր կապո-
 խում: Բա՛նա՛ն բանեւում, դո՛ւ
 Խուրձերը բարդ-բարդ սոյլով ու ձիով
 Քշում ու բերում կալը հասցնում:
 Կալում կալում ես, թեզում ու քամում,
 Մարուր ցորենը քո առնը կրում,
 Իսկ չոր դարմանը, անախոց համար,
 Չմեռուան պաշար, մարաքը լցնում:
 Իսկ երբ փչում է դառնաշունչ ձմեռ,
 Նստած խրճիթում քո խովին ես սրում,
 Սարքում, պատրաստում արօր ու գու-
 թան,
 Եւ դարնան դարուն նորից սպասում:

77. ԵՐԿՐԻ ՄՇԱԿՆԵՐ

Օ՛, ծանր հոգսերի խղճուկ գաւաղներ,
 Ու քան համբերող, քաջ է ձեր հողին,
 Տանջւում էք անվերջ օրեր, տարիներ,
 Կարծես տանջանքն է միայն ձեր բա-
 ժին...

Տեսել եմ, ինչպէս յուսալից, զը-
 ուարթ,
 Դուք մշակում էք անմշակ դաշտեր.
 Ինչպէս տանջանքում անլաց, ան-
 վըհատ
 Դուք երգ էք երգում՝ վաստակի
 երգեր:
 Տեսել եմ ինչպէս ամառուայ շողին,
 Երբ կրակ է թափում արեաւ երկինք,
 Ոսկեշող արտում, մանգաղը ձեռքին
 Դուք մէջք խոնարհած՝ թափում էք
 քրտինք:
 Տեսել եմ, ինչպէս և ցուրտ տաղա-
 կալի
 Չմրան գիշերներ նստած խրճիթում,
 Յոգնած ձեռքերիդ դադար չէք տալիս:
 Խովին էք նորոգում, մանգաղը սրում:
 Օ՛, Հայրենիքիս քրտնաջան որդիք,
 Որքան համբերող, քաջ է ձեր հողին,
 Չեզնով է միայն կանգուն հայրենիք,
 Համբոյր ու օրհնանք ձեր սուրբ վաս-
 տակին:

78. ՕՐՕՐՈՑԻ ԵՐԳ

Արի իմ սոխակ, թո՛ղ պարտէզ, մէրին,
Տաղերով քուն բեր աղիս աշերին.
Բայց նա լալիս է. դու, սոխակ, մի գալ,
Իմ որդին չուզէ տիրացու դառնալ:

Ե՛կ, աբեղաձաղ, թո՛ղ արտ ու արօտ,
Օրօրէ աղիս, քնի է կարօտ.
Բայց նա լալիս է. դու, ձագունկ, մի
գալ,
Իմ որդին չուզէ աբեղայ դառնալ:

Թո՛ղ դու տատրակիկ, քո ձագն ու
բունը,

Վույժույժով աղիս բեր անուշ քունը.
Բայց նա լալիս է, տատրակիկ, մի գալ.
Իմ որդին չուզէ սգաւոր դառնալ:

Թո՛ղ որսդ, արի, քաջասիրտ բազէ,
Քո երգը գուցէ իմ որդին կուզէ.
Բազէն որ եկաւ, որդիս լոկեցաւ,
Ռազմի երգերի ձայնով քնեցաւ:

79. Միրահեզիկ սիրուն աղջիկ,
Քնի՛ր անուշակ քնով,

Որ գորանաս սրտիս ծաղիկ
Քնքոյշ տեսքով, հասակով:

Քեզ սիրում է քո մայրիկը,

Մաքուր կաթինս քեզ տալով,

Եւ օրհնում է քո հայրիկը

Քեզ գգուելով, փարելով:

Խաչն Յիսուսի քեզ պահապան,

Գիշեր ցերեկ-օրն ի բուն

Որ զարգանաս իմ աննման

Եւ լինիս մայր սրբասուն:

80. Ս Ո Ւ Ա. Կ.

Ե՛կ, իմ սոխակ, դու սիրուն,

Արի, սոխակ, դու նախշուն,

Օրօր ասա Աստղիկին:

Տաղեր երգիր Աստղիկին

Դու իմ սոխակ սիրասուն,

Քաղցր ձենովդ զեղգեղուն

Երգեր ասա Աստղիկին,

Քաղցր քուն բեր Աստղիկին:

81. ՕՐՈՐՈՑԻ ԵՐԳ.

Ննջիր մանկիկ իմ սիրատուն,

Օրօր եմ ասում,

Պայծառ լուսին մեզմիկ նայում,

Քո օրօրոցում:

Կը պատմեմ քեզ շատ հեքիաթներ

Ու երգեր սիրուն,

Իսկ դու ննջիր, փակիր աչեր,

Օրօր եմ ասում:

82. Ֆուրն աստղերը կապոյտ երկնքում
Երգում են անուշ միասին խմբում,
Եւ զգուշութեամբ կամաց են երգում,
Որ չզարթեցնեն երկիրը նիրհած.

Ախ, ամբողջ օրը շրջող ոտներից,
Անվերջ աշխատող կուռ բազուկներից
Ամուր բաբախող մարդկանց սրտերից,
Խեղճ մայր-երկիրը սաստիկ է յողնած.

83. ՏԱՊԱՆԱԳԻՐ ՄԱՆԿԱՆ

Հազար երանի քեզ մանուկ անբիծ,

Որ շուտ հեռացար դու այս աշխարհից,
Ուր վաղուց ի վեր ունի բնակութիւն,
Անմեղութեան հետ մոլի չարութիւն.

Բայց այն ռմբ գիտէ, քեզ ի՞նչ էր սպա-
սում

Փշոտ, տատասկոտ այս մեր աշ-
խարհում.

Միթէ յաւիտեան պիտի մնայիր
Հանգիտ զրկի մէջ քու մօր սիրալիր,
Կամ թէ՛ յաւիտեան քեզ պիտի ժպտար
Գարնան վարդի հետ այս օտար աշ-
խարհ:

84. ԱՐԱՔՍԻ ԱՐՏԱՍՈՒՔԸ.

Մայր Արաքսի ափերով
Քայլամոլոր գնում եմ.

Հին հին պարուց յիշատակ
Այեաց մէջը պտրում եմ:

Բայց նոքա միշտ յեղեղուկ

Պղտոր ջրով եզերքին

Դարիւ-դարիւ խփելով.

Փախչում էին լալագին:

— Արարս, ինչո՞ւ ձկանց հետ
Պար չես բռնում մանկական.

Դու դեռ ծովը չը հասած
Սպաւոր ես ինձ նման:

«Արգանխ, անմիտ պատանի,
Ներհա ինչո՞ւ դարեւոր
Վրդովում ես նորոգում

Իմ ցտաւերը բերաւոր:
Սրբելի մահից յետ
Ե՛րբ ես աեռել, որ այրին
Ոտքից գլուխ պճնուի
Իր դարգերով թանկադին»:

85. ԶԱՅՆ ՏՈՒՐ...

Զայն աուր, ո՞վ ծովակ, ինչո՞ւ լուռ
եւ,

Ողբակից լինել չ'կամիս դժբախտիս,
Շարժեցէք զեփրուք, ալիքը վէտ վէտ,
Խառնեցէք արտասուքս այս ջրերիս
հետ:

Հայաստանի մէջ անցքերին վկայ,

Սկզբից մինչեւ այժմ, խնդրեմ ինձ աստ,
Միթէ միշտ այդպէս կ'մնայ Հայաստան
Փշալից անապատ, երբեմն բուրաստան:
Արդեօք գալո՞ւ է մի օր ժամանակ,
Տեսնել Մասիս գլխին մի դրօշակ,
Եւ ամեն կողմից պանդուխտ հայ ազ-
գիք

Դիմեն գէտ իւրեանց սիրուն հայրենիք:

86. Ծ Ի Ծ Ե Ռ Ն Ա Կ

Ծրձեռնակ, ծիձեռնակ,
Դո՛ւ գարնան սիրուն թռչնակ,
Դէպի ո՞ւր, ինձ աստ,
Թռչում ես այդպէս արագ:

Ա՛խ, թախր ծիձեռնակ,
Ծնած աեգս Աշտարակ,
Անդ շինիր քո բունը
Հայրենի կտուրի տակ:

Անդ հեռու ալեւոր
Հայր ունիմ սգաւոր,
Որ միակ իր որդուն
Մպստում է օրէօր:

Դու պատմէ, թէ ինչպէս
Աստ անտէր ու խեղճ եմ ես:
Միշտ լալով ողբալով
Կեանքս մաշուել, եղել է կէս:
Ասիւր, որ չի բացուած,
Թառամեցայ միացած,
Ես ծագիկ զեղեցիկ
Հայրենի հողից զրկուած:
Դէ, սիրուն ծիծեռնակ
Հեռացիր, թռիւր արագ
Դէպի հայոց աշխարհը
Ծնած տեղս Աշտարակ:

87. Կ Ռ Ո Ւ Ն Կ

- 1) Կոռնիկ, ուսմաթ կուգաս, ծառայ եմ ձայնիդ,
Կոռնիկ, մեր աշխարհէն խաբրիկ մի չունիս:
Թողեր եմ ու եկեր մեքերս ու այգիս,
Քանի որ ան կանեմ, կու քաղուի հողիս:
2. Աշունն է մօտեցել զնալու ես հիւր,
Երամ ես ժողուեր հազարներ ու բիւր:
Ինձ պատասխան չ'տուիր ելար զնացիր,
Կոռնիկ, մեր աշխարհէն զէ զնա, հե-
ռացիր:

88. Ե Ր Ա Ձ.

Ես լսեցի մի անուշ ձայն,
Իմ ծերացած մօրս մօտ էր,
Փայլեց նշոյլ ուրախութեան,
Բայց արհամ, որ երազ էր:
Կարկաչահոս արբիւր այնտեղ
Թաւալում է մարգարիտ
Նա յստակ է, որպէս բիւրեղ,
Այն երազ էր ցնորամիտ:
Եւ մեղեդին տխուր, մայրենի
Յիշեց մանկութեան օրեր,
Մօրս համբոյրն ես զգացի
Ա՛խ, այդ ինչո՞ւ երազ էր:
Կրճքին սեղմեց կարօտագին,
Աչքերս որբեց շատ թաց էր,
Բայց արօտասուքս զնում էին,
Ա՛խ, այդ ինչո՞ւ երազ էր:

89. Կ Ւ Ի Ի Կ Ւ Ա

Երբոր բացուին դռներն յուսոյ,
Եւ մեր երկրէն փախ տայ ձմեռ,
Չքնաղ երկիրս մեր Արմենիոյ

երբ վաղէ իւր քաղցրիկ օրեր.
 Երբոր ծիծառն ի բոյն դառնայ,
 Երբոր ծառերն հագնին տերեւ:
 Յանկամ տեսնել զիմ կիլիկիա,
 Աշխարհ, որ ինձ ետուր արեւ:
 Տեսի դաշտերն Ոսորիոյ,
 Լեռ Լիբանանն և իւր մայրեր,
 Տեսի գերկիւրն Բտալիոյ,
 Վենետիկ և իւր գոնդոլներ,
 Կղզի նման չիք մեր Կիպրեայ,
 Եւ ոչ մի վայր է արգարեւ Յանկամ...

Հասակմը կայ մեր կենաց մէջ,
 Ուր ամենայն իզձ կաւարտի,
 Հասակմը ուր ճէգին ի տենչ
 Յիշատակաց իւր կարօտի:
 Յորժամ քնարս իմ ցրտանայ,
 Սիրոյս ատլով վերջին բարեւ:
 Երթամ ննջեմ յիմ կիլիկիա
 Աշխարհ, որ ինձ ետուր արեւ:

20. Գ. Ա. Ր. Ո. Ի. Ն.

Ո՛հ, ինչ անուշ և ինչպէս զով

Առաւօտուց փշեւ, հովիկ,
 Ծագկանց վերայ զուրգուրալով
 Եւ մաղերուն կուսին փափկիկ.
 Բայց չես հովիկ իմ հայրենեաց,
 Գնան, անցիր սրտէս ի բաց:
 Ո՛հ, ինչ աղու և սրտագին
 Ծառոց մէջէն երգես, Թռչնիկ,
 Սիրոյ ժամերն ի յանառաւին
 Զմայլեցան ի քո ձայնիկ,
 Բայց չես Թռչնիկ իմ հայրենեաց
 Գնան, երգէ, սրտէս ի բաց:
 Ո՛հ ինչ մրմունջ հանես, վտակ,
 Ականակիտ և հանդարտիկ.
 Քո հայելուդ մէջ անապակ
 Նային զիրենք վարդն ու աղջիկ,
 Բայց չես, վտակ, իմ հայրենեաց,
 Գնան, հոսէ սրտէս ի բաց:
 Թէպէտ Թռչնիկն և հովն հայոց,
 Աւերակաց Թռչին վրայ.
 Թէպէտ պղտոր վտակն հայոց
 Նոճիներու մէջ կը սողայ.
 Նոքա հառաչք են հայրենեաց,
 Նոքա չերթան սրտէս ի բաց:

91. Գ Ա Ր Ո Ի Ն

Մի նոր հրաշալի կեանքով շունչ
առած,
Ժպտում է բնութիւն, գերթ մանուկ
չքնաղ,
Եւ նոր զօրութեամբ երկիրն է զարթնած
Եւ երկինք յստակ ու զեղած իծաղ:
Այս խորհրդաւոր պահուն ես մենակ
Ծնկաչոք ահա քեզ եմ աղօթում,
Խաչեցեալ Փրկիչ, քո հովանու տակ
Յաւատանջ սրտիս իղձերն եմ բերում:
Թող այս բերկրալից զարնան ջերմ
արեւ
Իմ հայրենի տան վերայ էլ վառի.
Մի օր, գէթ մի օր թող քո առաջի
Այնտեղ հէզ ծիծառն օրհներգը լսուի՝
Թէ անցաւ և մեր ձմեռ ցրտաշունչ,
Թէ անպարտ արիւնն հասցրեց վարդեր,
Եւ տառապելոց սղբերն ու տրտունջ
Դարձան գոհութեան խաղաղ մաղթանք-
ներ:

92. Գ Ա Ր Ո Ի Ն

Գարուն կանաչ և ծաղիկներ
Բերաւ փռեց մեր լեռներուն,
Եւ իշխանի հատու սուսեր՝
Խաղաղութիւն մեր սրտերուն:
Բայց երանի անանց լինէր այս դարուն,
Եւ ծաղիկներ միշտ փիթեին անթառամ,
Եւ խաղաղ կեանք մեր աղգակցաց հա-
մարիւն
Երկար ամօք բաշխէր երկինք բարե-
խնամ:
Բայց վա՛շ բնութեան գեղեցկու-
թիւն:
Պիտի աւրէ ծերոսէլ ձմեռ,
Եւ հայ սրտի խաղաղութիւն
Սուր թշնամուն աշխարհաւեր:
Օհ, աղջիկներ, պատրաստեցէք մեզ
սրաշար,
Զմբան սաստիկ ուժի գէմը առնելու,
Իսկ դուք, աղայք, սրեցէք սուր ու հը-
րացան
Մեր թշնամեաց բանակները ցրելու:

93. Մ Ի Ո Ի Թ Ի Ի Ն

Ի բիւր ձայնից բնութեան շքեղ
Թէ երգ թռչին սիրողաբար,
Մատունք կուսին ամենագեղ
Թէ որ զարնեն փափուկ քնար,
Չունին ձայն մի աշնքան սիրուն,
Քան զանձկալի եղբայր անուն:
Տուր ինձ քո ձեռք եղբայր,
Եղբայր ենք մենք, որ մըրկաւ էինք
զատուած,
Բախտին ամեն ոխ չարանենդ
Ի մի համբոյր ցրուին ի բաց:
Ընդ աստեղօք ինչ կայ սիրուն,
Քան զանձկալի եղբայր անուն:

94. Պարզը բացուել ա ծաղկոցին,
Ամպի ցօղը շողայ ծոցին.
Այ իմ վարդին կարմիր վարդին,
Դաստա գրախտին:
Թերթիկները դուզ փռել ա,
Նազուկ գլուխը ծռել ա: Այ իմ...

Ձեռ համբերել վարդ մայիսին
Դուրս ես եկել մարտի ամսին:
Կը թառամես, կը չորանաս,
Մինչ մայիսին չը դիմանաս:
Դաժան քամուն չես համբերի,
Ջաղիր ճըճուն կլիս գերի:
Կը զոնգատէ մեր խեղճ բլբուլ,
Թէ որք մնաց սիրուն վարդէն:

95. Ա Ղ Ք Ա Տ Կ Ի Ն

Յուրոր փչեց ձմեռ սասաիկ,
Ձիւնը ծածկեց գետինը.
Ամենայն մարդ մտաւ իւր տուն
Պատասպարուել ցրտիցը:
Փամի դռան դողդողալով,
Կանգնած է մի սղքատ կին.
Նրա հանգերձ պտտառ-պտտառ
Չունի շապիկ իւր հագին:
Անհամարձակ նա իւր ձեռքը
Պարզում է անցկացողին,
«Ողորմութիւն արէք, պարսն,
Անտուն, անտէր սղքատին»:

96. ՀԱՅ ԴԻԻՅԱԶՈՒՆՔ

Ով որ ծանօթ է պատմութեան ազգիս
 ձանաչէ Վահան, Մուշեղ, Գարեգին,
 Նոքա զնացին Տէր եւ մեզ կըկին,
 Մէջ Կարօն, Մուսէն եւ քաջ Աղասին:
 Ասլըին պաշտպանք մեր ազգին
 Կարօն, Մուսէն, Աղասին:
 Պիտի միշտ պարծի Բանաքեռ տւան,
 Որ ծնաւ ձեզ պէս կորիւն աննման.
 Դուք Արարատայ ամուր ախոյեան
 Փառք եւ ցնծութիւն Ասքանազեան տան:
 Ասլըին...

Մասիս, Արագած, Նախա եւ Սիփան
 Սիրով տեղի տան ձեր սուրբ միութեան.
 Դուք նոցա բարձրից տեսէք Հայաստան,
 Որտեղ վտանգ կայ հասէք օգնութեան:
 Ասլըին պարծանք մեր ազգին
 Կարօն, Մուսէն, Աղասին:

97. ՄԱՆԿԻՆԵՆ ԵՐԴԵՐ

Արտուտիկ, ինչո՞ւ թռչում ես վեր
 վեր,

երկնքէն ասում ես ամուր անդեր,
 Պարտէզ ու այգի ինչի՞նչ ես գնում,
 Քնքոյշ ձագերդ սրտեղ ես հանում:

98. Քրեղակը դուրս է եկել պըս-
 պղալով,

Շողքը հերթից ներս է բնկել շողշողալով,
 Ծիարը ծառին կշկշու՞մ է ծվծվալով,
 Զորումս անուն քըքու՞մ է վշվշալով,
 Ծոյլ աղայի բունն է տարել խոժիւղով,
 Տրեխները շունն է տարել մոմաւղով:

99. Քրե, արե, Էկ, Էկ,
 Զիզի քարին վէր Էկ,
 Սև սև ամպեր հեռացէք,
 Արևին ճամբայ արւէք:
 Թողէք զայ զա մեզ մօտ,
 Դրա լոյսին ենք կարօտ.
 Կարմիր արե Էկ, Էկ —
 Նախշուն քարին վէր Էկ:
 Արեն յաղթեց ամպերին,

Շողքը ձգեց սարերին,
Զիզի քարը, տէս, տէս,
Պսպղում է սսկու պէս.
Սիրուն արե, միշտ եկ
Զիզի քարին վեր եկ:

100. Պէտ սարերում ձիւն է փայլում,
Բայց դարուն է, այդ պատճառու
Ամեն կողմից ջուր է թափւում,
Բոլոր բնութիւն արթնանում:

101. Պէ՛հ, քաշեցէք իմ դոյզ եղներ,
Օրավարը վարեցէք.
Խօփ ու ձիւն ժանդոտել են
Երկար անդորձ մնալուց:

102. Պէ՛հ սիրուն ես դու իմ շնիկ,
Քանի այդպէս փոքրիկ ես,
Քեզ համար ես միտ կը բերեմ,
Լաւ կերակուր կուտացնեմ:
Երբոր գուն էլ կըմեծանաս,

Շատ գեղեցիկ բոյ կանես,
Ապա մեր տան հաւատարիմ
Դու պահապան կը լինես:

103. Գ Ա Ռ Ն Ի Կ

— Ինչի՞ կուլաս դու, գառնիկ,
«Խիտա ծեծ կերայ ես, մայրիկ»:

— Քեզ ո՞վ ծեծեց, իմ գառնիկ,
«Մէկ չար պառստ, ախ մայրիկ»:

— Ինչի՞ ծեծեց քեզ գառնիկ.
«Ծառի տակն էի, մայրիկ»:

— Ինչո՞վ ծեծեց քեզ, գառնիկ.
«Մեծ մահակով, ահ, մայրիկ»:

— Ո՞րտեղից վարկեց, գառնիկ,
«Տափիկներիս, ահ, մայրիկ»:

— Ի՞նչպէս լացիր դու, գառնիկ:
«Մէ, մէ, մէ, մէ, մայրիկ»:

104. Գ Ա Ռ Ն Ո Ւ Կ

— Սիրուն անմեղ իմ գառնուկ
Բուրդդ սպիտակ ու փափուկ
Դաշտ վազելով ու արօտ,

Մօրդ քաշում ես կարօտ:
Մի լար, գառնուկ սիրական,
Փոքրիկ սղի զու նման,
Կը գայ մայրդ, հետը շատ
Կը բերէ քեզ անուշ կտիծ:

105. ԱՌԱՒՕՏԵԱՆ

Ինչո՞ւ տքրարը կանգնած է բակում,
Պինդ-պինդ կանչում է իր կուկուրի-
կուն.

— Էնդուր՝ որ վաղուց արեն է ծագել,
Բայց ծոյլ երեւոյն քնից չէ զարթել.
Դեռ չի վեր կացել, աղօթքն արել.
Դպրոցի դասը դեռ չի սովորել:
Կանչում է արլարն իր կուկուրիկուն,
Տղայոց պարտքը միտերն է ձգում:

106. ՆԱՊԱՍՏԱԿ

Մի վազիր այգեչափ արող,
Իմ սիրունիկ նապաստակ.
Շատ պատիկ ես տակաւին,
Թաթիկներդ կը յոգնին:

Քեզ կը բերեմ կաթն ու ճաշ
Շաբրեջրով համեմած,
Ուտես, խմես գօրանաս,
Բանից կարօտ չմնաս:
Ծանր-ծանր կը քայլես,
Սիրտս վեր-վեր կը հանես.
Կարձակեմ քեզ, երբ ուզես,
Կերթաս ազատ կարածես:

107. Ա Շ Ն Ա Ն Ը.

Դեղնած դաշտերին լիջել է աշուն,
Անասուր կրկին ներկել է նախշուն,
Պաղ-պաղ մէգի հետ փշում է քամին,
Դշում է, տանում տերեւ դեղին:
Տխուր հանդերից մարդ և անասուն
Բաշում են կամաց իրենց տունն ու
բուն:

108. Շոգերն անցան, պտուղները
Քաղեցին,
Հացով, մրգով ամբարները լցրեցին,

երկինքն ամպեց, բարակ անձրեւ է մա-
ղում,

Մերկ ծառերը և դաշտերը ողողում:

Էյ, Էյ, Էյ աշուն է:

Տեսէք, ինչպէս նախշուն է:

109. Մարի լանջին, մէզի միջին
Սոխոջում է ու տրանջում,
Զուրը բարակ, ջուրը տխուր,
Վաճ վիճ, վաճ վիճ,
Ո՛ւր կտրան ո՛ւր:

110 Մհաթ բարով մարգեր,

Արօտներ սիրուն,

Ամառն անց կացաւ

Հօտն իջնում է տուն:

Մենք էլ կըզանք, կ'ըլարձրանանք սարը,
Երբ թռչունները կ'երգեն քաղցրալիբ,
Երբ ծագիկները կըծածկեն երկիր,
Անուշ մայիսին կը բացուի վարդը:

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՄՈՏԻՎՆԵՐ.

111. Ա. Բ. Ա. Զ. Բ.

Արագն եկաւ լափին տալով.

Ժեռ քարերին ափին տալով.

Ո՞րտեղ թաղեմ ես իմ դարդը,

Զօր գլուխ տափին տալով:

Այ իմ Արագ, ջուրդ վարար,

Սիրուն եարիս եարար տեսմը:

Ես չհասայ իմ մուրազին,

Արագ, եարաբ՝ կարօտս առմը:

Ամպերն ընկան Մասիս սարին

Կարօտ մնացի ես իմ եարին:

Աստուած սիրես, էլւած սրտիս

Զուգար բերես եկող տարին:

Կասես շողքը քարին ընկաւ,

Կրակն իմ սրտիս մէջն ընկաւ:

Կամար ունքից, թուխ աչքերից,

Ցաւն իմ ջիւան ջանիս ընկաւ:

112. Լուսնակին անուշ, հովն անուշ.

Շինականի բունն անուշ.

Ծագեց լուսնակին երկնուց.

Հովւի փողն էր անուշ:

Հօտաղներ կարածայ,

Մաճկալ պառկել, բունն անուշ:

Զողղուն բամին կփչէ,

Ծովային հովն էր անուշ:

Դաշանը, ձորեր մնջեր են,

Զրեր զլղան, ձէնն անուշ:

Հաւքեր թառան իրենց բուն,

Բլբուլի տաղն էր անուշ:

Անմահական հոտ բուրէր

Քաֆուր վարդի հոտն անուշ:

113. Ա.Լ.Ա.Գ.Ե.Ա.Զ.Ի.Ն.

Սևմութ ամպեր ճակարից զիգուան

Դուման հագար, Ալագեազ,

Սրտումս արև հէջ չի ծագում,

Սիրտս էլ դուման, Ալագեազ:

Է՛յ, Մանթաշի. նախշուն հաւքեր,

Իմ դարդս որ ձերն եղնէր,

Զեր էգ զառ-փառ խոս փետուր-

ներ

կը սենային, բանց գիշեր:

— Է՛յ վախ, կոտրան իմ թևերս,

Ընկայ գիրկդ, Ալագեազ,

Ախ, մեծ սրտիդ սեղմեմ սիրտս,

Լամ, արիւն լամ, Ալագեազ:

104. Ալագեազ սարն ամպելա,

Վա՛յ է, է, է, է, է, է, է, է,

Աղբէր իր ձին թամբել ա,

Իմ մայրիկ ջան, իմ քոյրիկ ջան:

Մեր դռանը խնկի ծառ

Գլուխւմ ջան,

Զեր դռանը խնկի ծառ գ. ջ.

Խնկենին է բերել բար գ. ջ.

Իմ խորտաիկ պատիկ հար գ. ջ.

Աղբէր իր ձին թամբել ա.

Եարոջ գոնէն անցել ա. ջ.

Ելէ դաշտը խաղցել ա. ջ.

Անձրև եկել թրջել ա: 2.
Արև եկել չորցել ա, 2.
Քսենց կարմիր վարդ բացւել ա:

105. ՇՈՂԵՐ ԶՍՆ

Ամպել ա ձուն չի գալի Շ. ջ.,
Մթնել ա տուն չի գալի Շ. ջ.
Դու շորորա, դու օրօրա Շ. ջ.
Ամպի տակին ձուն կերեալ Շ. ջ.

Սիրտս կրակով լցուած,
Աչքերիս քուն չի գալի:
Վարդավառին ինձ համար
Ձուն բեր դուն սարերիցր:
Աշունն եկաւ սարիցը,
Տերև թափեց ծառիցը:
Սարի գլխուն ձուն եկաւ,
Շէկլիկ եարս տուն եկաւ:

106. Մարալօ, մարալօ, մարալօ,
Լուսնեակ դու անցիր գնա,
Կանգ տուր ու էնպէս գնա,
Բարև տուր, անցիր գնա:

Ինձ համար հաց ես բերել,
Թագա մածուն ես մերել,
Իմ զրկած աղուխիցը,
Ախ, դու ինչքան ես կերել:
Դռնիցը մի դուրս արի,
Ինձ մի խփի չոր քարի,
Ես բու էշխիգ ձեռիցը
Դառել եմ զիժ սարսարի:

107. Սոնա եար, Սոնա եար,
Սոնա զիլբար, Սոնա եար.
Վարդավառ գալիս ա.
Ծաղիկը ցնծալիս ա:
Վարդ եմ քայել մաղերով
Վեր եմ դրել շաղերով.

Արի իմ սիրուն ախպէր,
Առաջ դամ քեզ տաղերով:
Տապկած հաւի ճուտ բերեմ.
Ոչխարի մածուն բերեմ.
Որ գիտենաս անուշ ջան,
Թէ քեզ սրտով կը սիրեմ:

108. Զրե բացուեց թախ ամ-

պերէն,

կաքաւ թաւ կանաչ սարէն,

կանաչ սարէն, սարի ծերէն

Բարե բերաւ ծաղիկներէն:

Սիրունիկ, սիրունիկ,

Սիրունիկ նախշուն կաքաւիկ:

Քո բոյն հիւսած ծաղիկներով,

Շուշան, նարդիկ, նունուֆարով,

Քո տեղ լցուած ցօղ ու շաղով,

Քնես կելնես երգ ու տաղով: Սիր...

Երբ կը կայնես մամառ քարին,

Սաղմոս կասես ծաղիկներին.

Սարեր, ձորեր գուարթ կանես,

Դարաի ծովէն սիրա կը հանես:

109. Զսօր ուրբաթ է պառ է,

Դէ, հէ, գնգը, գնգը,

Դէ հէ ջան,

Սրտիկս արծաթի թառ է:

Սրտիկ մալուլ մի մնա,

Աշխարհ մարդու չի մնա:

Աշունն եկաւ ցօղալէն,

Ծառի թփեր գողալէն:

Կուենի կանչեց սարերուն,

Ղարիբ աղէն երերուն:

Ելել եմ ու ճար չունիմ

Մեռնելու հնար չունիմ:

110. Սարերի վրով գնաց, եւր, եւր,

Արօտով, արօտով, եարիս կարօտով,

Իմ եարը խռով գնաց, եւր, եւր,

Մհացիր, մհացիր, զինուր գնացիր:

Էս գիշեր լուսր տեսայ,

Երի, երի, երի ջան,

Իմ եարը զուսր տեսայ,

Երի մարալօ ջէյրան:

Երեւ էր ուխտ էր գալի,

Երի, երի, երի ջան,

Հրացանը ուսր տեսայ,

Երի մարալօ ջէյրան:

Ոչ լոր ելաւ, ոչ կաքաւ,

Ձեռնէս թոնելով զնաց:

Ծաղիկ էր հոտով-մօտով
Ելաւ, անցաւ իմ մօտով:
Աչքս տեսաւ՝ սիրելի
Ու մնացի կարօտով:

111. ՁԱՆ ԳԻՒԼՈՒՄ

Ծառիս տակը մանիշակ,
Ձան զիւլում, ջան, ջան.
Իմ ետը քանց քեզ շիշակ,
Ձան ծաղիկ, ջան, ջան:
Անձրե եկաւ զողալէն,
Ուռ ու տերեւ զողալէն.
Հրէս էկաւ իմ տխրէր,
Ալ ձին տակին խաղալէն:
Իմ ախպէր ծառի տակին,
Սաղմօսը կռան տակին.
Սաղմօսը գիր ա արել,
Լեզուն բիւրբիւ ա գտել:
Արեւ կամար կամար,
Կապել ես սոկէ քամար,
Յիսուն օր պաս եմ պահել
Իմ եղբօր ճամբի համար:

112. Ձախորդ օրերը ձմրան նման
Կուգան ու կերթան,
Վհատելու չէ, վերջ կունենան,
Կուգան ու կերթան:
Դառն ցաւերը մարդու վրայ
Չեն մնայ երկար,
Որպէս յաճախորդ շարուէ-շարան,
Կուգան ու կերթան:
Փորձանք, հալածանք և նեղութիւն
Ազգերի զլիւից,
Ինչպէս ճանապարհի կարաւան
Կուգան ու կերթան:
Ո՛չ ուժեղը թող պարծենայ,
Ո՛չ տկարը տխրի,
Փոփոխակի անցքեր զանազան
Կուգան ու կերթան:

Յ Ը Ի Ե Լ Ո Ւ Ը Պ

ԵԿԵՂ. ՔԱՌԱՉԱՅՆ ԽՄԲԵՐԻ ՀԱՄԱՐ.

113. Ծ Ն Ն Դ Ե Ս Ն

Այսօր տօն է ծննդեան աւետիս,
Տեառն մերոյ և յայանութեան աւ.
Այսօր արեն արգարութեան աւետիս,

Երևեցաւ ի մէջ մարդկան աւ.:

Այսօր սուրբ կոյսն անապական աւ.
Ծնաւ երեք զանման արքայն աւ.:

Այսօր հրեշտակք երկնից իջան աւ.,
Ընդ մեզ օրհնեն զանման արքայն աւ.:

Մեղքոն, Գասպար և Բաղդասար աւ.
Ունին երեք ազնիւ ընծայ աւ.

յերուսաղէմ քաղաք մտին աւ.,

ի մէջ յայրին զկոյսն տեսին աւ.:

Խորհուրդ մեծ և սքանչելի էր յայտմ
աւսր յայտնեցաւ, հովիւրն երգեն ընդ
հրեշտակս, տան աւետիս աշխարհի:

Ծնաւ նոր արքայ ի Բեթղէմ քաղա-
քի, որդիք մարդկան օրհնեցէր, զի վասն մեր
մարմնացաւ:

Անբաւելին երկնի և երկրի ի խոնձա-
րուրս պատեցաւ. ոչ մեկնելով ի հօրէ՝ ի
սուրբ այրին բազմեցաւ:

114. ՄԿՐՏՈՒԹԱՆ

Ով զարմանալի խորհուրդ այս մեծ
յայտնեալ,

Արարիչն Աստուած ի Յորդանան եկեալ,

Կամէր մկրտիլ ի ծառայէն իւրմէ,
Զառնոյր Կարապետն զմկրտելն
ի յանձն:

—

115. Քյսօր ձայնն հայրական
Յերկնից իջեալ հաճոյական

Սիրեցելոյ որդւոյ վկայն:

Այ յորդորէ, գեա յորդորէ,

Գեա Յորդանան.

Յորդորական ձայնիւ երգէր

Մեծ կարապետն Յովհաննէս:

Այսօր երկիրս երկինք եղև

Երևելով Աստուածորդոյն

Սիրով եկեալ ի մկրտիլ: Այ յոր...

Այսօր վերին զասք հրեշտակոց

Ուրախացան ընդ սուրբ զալուստ

Աստուածորդոյն ի Յորդանան: Այ..

Այսօր եկեալ Աստուածորդին

ի Յորդանան խոնարհութեամբ՝

Զրով մկրտիլ ի Յովհաննէ:

Այ յորդորէ, գեա յորդորէ...

114. Զ Ս Տ Կ Ի

Միաշաբաթ օր հանգստեան
 Կանայք եկին ի գերեզման:
 Եւ ողբային արտօսուական,
 Խնդրել զՅիսուս անասական:
 Զայնեաց հրեշտակն ուրախական
 Զայն որ եղին ի գերեզման:
 Զեզ աւետիս յարեալ փեսան
 Դրունք զժոխոց խորտակեցան:

115. Պ Ս Ա Կ Ի

Յաղթող և զնոր օրհնութիւն
 Միշտ ի բարձունս երգեսցուք:
 Թագաւորին Քրիստոսի
 Հաւատացեալ ժողովուրդ:
 Որ եկն ի լուսաւորել
 Զընտրեալ սուրբ եկեղեցի
 Եւ պսակեաց սուրբ խաչիւն
 Նմա զփառս երգեսցուք:
 Փառք հօր և Որդւոյ և հոգւոյն սրբոյ
 Այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից:
 Այսօր և մեք տօնեսցուք

Զնաւակատիւ սուրբ խաչին
 Եւ փրկողին մատուցուք
 Փառք և պատիւ յաւիտեան:

116. Քւրախ լեր սուրբ եկեղեցի,
 Քանգի քրիստոս արքայն երկնից
 Այսօր պսակեաց զքեզ խաչիւն իւրով
 Եւ զարդարեաց զամուրս քո
 Սքանչելի փառօքն իւրովք:
 Խնդա՛ յոյժ զուսար Սիոնի,
 Քանգի երկիրս երկինք եղև
 Այսօր վերին քո նորոգմամբ
 Եւ թագաւորն երկնաւոր
 Հաճեցաւ բնակիլ ի քեզ:

—

117. Ո՛վ երանելիւ զամենեցուն
 Տիեզերական իշխանութեամբ
 Ընկալար ի Քրիստոսէ
 Զթագ պարծանաց:
 Ով (Թէոդոս) մեծ թագաւոր
 Վասն մեր բարեխօսեա
 Առ թագաւորն երկնաւոր:

Որ քոյին սուրբ աղօթիւքդ
Վանեցեր զթշնամին,
Կոխելով գսատանայ՝
Ընդ երկնայիսն դասեցար: Ով...
Փառք հօր...

Ուստի և մեր հաւատացեալքս,
Տօնեմք զքո յիշատակ.
Օրհնութիւն առաքելով
Զքեզ պսակողին: Ով. .

118. Սիօնի որդիք զարթիք,
Հարսին լուսոյ տուք աւետիք,
Եթէ փեսայն քո յարուցեալ
Յաղթեաց մահու իշխանութեամբ,
Գայ պսակէ զքեզ փառօք,
Ել ընդառաջ պճնեալ զարդուք.
Երգեան երգ նոր յարուցելոյն
Ննջեցերց կենաց պրտոյն:



Արմ.

2-2359

Ս Ե Բ Ա Յ Ո Ւ Թ Ե Ս Մ Բ

1.080 ԵՆ ՏԵՍԵՆ

1. Մանկական երգարան (սպառազ) — 20 կ.
2. Թարգմանակ. մեղեդիներ (սպառ.) — 5 կ.
3. Չեռնարկ թեթևալուծի ման գ. տիպ. — 15 կ.
4. Ս. Պատարագի երգեր — — — 3 կ.
5. Դպրոցական Տօներին — — — 20 կ.

Դիմել՝ Армавиръ (Куб. обл.)
 арм.уч. — ше, учителю-регенту М. Тарахчианъ
 Թիֆլիսի գրավաճառներին և Բազուի
 Պատրեզնիկ գրախանութին.

4475

0008674

2013

ՀՀ Ազգային գրադարան



NL0008674

